



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

---

---

ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՆԵՐՔԻՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ,  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

3

Սեպտեմբեր, 2006

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Գ Լ Ո Ւ Բ Ո Ւ Մ

Վերլուծական տեղեկագիր

## Г Л О Б У С

Аналитический бюллетень

---

---

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստան. ներքաղաքական իրադրություն	5
Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթատարը	9
<i>Հավելված 1. Էներգետիկ գործընթացների մասին</i>	<i>11</i>
Вашингтон и Москва идут на изменение ракетного баланса в мире	13
<i>Հավելված 2. Оценки ядерных арсеналов США и России на основе данных The Nuclear Weapon Archive</i>	<i>16</i>
Իսլամական խաղաքարտ դարաբաղյան հակամարտությունում	18
<i>Հավելված 3. Բարվի հոշակագիրը</i>	<i>21</i>
Национальные меньшинства Азербайджана	25
1. Талышское национальное меньшинство Азербайджана в поисках своего самоутверждения	25
2. Разделенный рекой и притесняемый властями – лезгинский народ	28
3. Удины: этнографическая справка и современная ситуация	31
Проблемы армяно-грузинских отношений и анализ ситуации в Джавахе на современном этапе	33
Վրաստան. իրավիճակային վերլուծություն	37
<i>Հավելված 4. Ռազմական բալանսը Հարավային Կովկասում</i>	<i>41</i>
Թիֆլիսի հայ համայնքը. նոր մարտահրավերներ, հին խնդիրներ	42

## ՌՌԻՍԱՍՏԱՆ. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանում, ինչպես և ՀՀ-ում, 2007-2008թթ. կայանալու են խորհրդարանական և նախագահական ընտրություններ: Հատկանշական է, որ երկու երկրներում էլ 2008-ին ավարտվում է նախագահների պաշտոնավարման սահմանադրական ժամկետը: Առաջին դեմքերի փոփոխման գործընթացները ՀՀ-ում և ՌԴ-ում ունեն ընդհանրություններ և տարբերություններ: Նախնական գնահատականներն այսպիսին են. երկու երկրների քաղաքական ընտրանիներն էլ ունեն իրենց իշխանությունը վերաբարձրելու բավարար ռեսուրսներ: Ենթադրվում է նաև, որ ՌԴ-ում և ՀՀ-ում հիմնականում պահպանվելու է ներկայում գոյություն ունեցող քաղաքական կուրսը, և դա բխում է երկու երկրների ազգային շահերից: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ իշխանափոխության գործընթացները, որքան էլ նախապես ծրագրվեն, պարունակում են որոշակի ռիսկեր և անորոշություն:

**ՌԴ քաղաքական ընտրանու պահպանողական մոտեցումները.** Այսօր Ռուսաստանի ներքաղաքական զարգացումները ենթարկվում են «հետպուտինյան դարաշրջանին» նախապատրաստվելու տրամաբանությանը, և այդ տեսանկյունից նախագահ Պուտինի շուրջ համախմբված ընտրանու համար առաջնայինը անձնական կարգավիճակի և շահերի պահպանման խնդիրը չէ: Համաձայն տարբեր գնահատականների՝ մոսկովյան և մարզային բարձրակարգակ «նոմենկլատուրայի» 30-40%-ը կազմում են հատուկ ծառայությունների նախկին աշխատակիցները և բանակի պաշտոնաթող սպաները: Ընտրանու այդ շերտը, հիմնականում, ավելի հարմարված է գործելու պետական կառույցներում, քան ձեռներեցության կամ այլ ոլորտներում: Պետական ծառայությունը համապատասխանում է նախկին սպայակազմի մասնագիտական պատրաստվածությանը, մտածելակերպին և մենթալիտետին: Նման հատկանիշներ և պահպանողական կողմնորոշումներ ունեցող ընտրանու ձևավորումը, համաձայն Պուտինի նախագծի, պետք է նպաստեր Ռուսաստանի վերականգնմանը, և այդ մոտեցումն իրեն արդարացրեց. ՌԴ հայտնի հաջողությունները պետականաշինության բնագավառում զգալի չափով պայմանավորված են նման ընտրանու առկայությամբ: Այդ ընտրանին է, որ այժմ վերահսկում է պետական-վարչական և նյութական ռեսուրսների մի զգալի մասը և Պուտինի հենարանն է երկրում:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ «պուտինյան թիմն» ավելի քան սուր է ընկալում ներկա պետականակենտրոն քաղաքականության հնարավոր փոփոխման հետևանքները: «Նոմենկլատուրայի» համար գաղտնիք չէ, որ «կուրսի փոփոխման» սցենարը ոչ միայն կվտարի առանձին անհատների իշխանական բուրգից, այլև խաղից դուրս կբերի ներկայիս ընտրանու գրեթե ողջ կազմը: Այդ ամենը «նոմենկլատուրային» թելադրում է գործել թիմային, կորպորատիվ սկզբունքներով, ինչն անհամեմատ արդյունավետ է դարձնում նրանց գործունեությունը: Թերևս, այս հանգամանքն էլ «պուտինյան գծի» շարունակականության ապահովման գրավականներից մեկն է:

**Պուտինի «հետնորդի» հիմնախնդիրը և «անորոշության» մարտավարությունը.** Ռուսաստանի պետականության վերականգնումը կապվում է Պուտինի անվան հետ (բավական է նշել, որ 1999թ. այդ երկրի բյուջեն կազմում էր մոտ \$25 մլրդ, իսկ 2007թ. բյուջեն պլանավորվում է ավելի քան \$250 մլրդ-ի չափով): Նրա վարկանիշը (այն որոշ ժամանակահատվածներում հասել է մինչև 70%-ի), հսկայական վարչական ռեսուրսը և լուրջ ընդդիմության բացակայությունը գրեթե կասկած չեն հարուցում այն հարցում, որ ՌԴ ապագա նախագահ կդառնա նա, ում մատնացույց կանի Պուտինը:

Միևնույն ժամանակ, առայսօր Պուտինի «հետնորդի» խնդրում անորոշություն է տիրում: Այս տարվա սկզբին թվում էր, թե ընտրություն պետք է կատարվի Սերգեյ Իվանովի և

Դմիտրի Մեդվեդևի միջև (որպես հնարավոր թեկնածու դիտարկվում էր նաև Դմիտրի Կոզակը, չնայած վերջինս հերքում էր նման հնարավորությունը): Մակայն Պուտինը հետագայում շփոթություն մտցրեց այդ հարցում՝ հայտարարելով, թե «հետնորդը» կարող է այնքան էլ քաջածանոթ չլինել լայն հանրությանը: Նման հայտարարությունից հետո, հիշելով Մ.Ֆրադկովի՝ բոլորի համար անսպասելիորեն վարչապետ նշանակվելը, ռուսաստանյան ՋԼՄ-ում սկսեցին շոշափվել ամենազանազան տարբերակներ. հատկապես ուշադրության էր արժանի «Ռուսաստանյան երկաթգծեր» ԲԲԸ նախագահ Վլադիմիր Յակունինի հնարավորությունների քննարկումը: Վարկածը հիմնավորվում էր նրանով, որ «պիտերյան-չեկիստական» թիմի այդ գործիչը «Ազգային փառքի կենտրոնի» հոգաբարձուների խորհրդի և «Անդրեյ Պերվոզվաննի» հիմնադրամի նախագահն է, իսկ վերջիններս այն «փակ» կազմակերպություններն են, որտեղ ռուսական հոգևոր և աշխարհիկ բարձրագույն վերնախավը նախագծում է Ռուսաստանի զարգացման գաղափարախոսությունը և ռազմավարությունը:

Բոլոր պարագաներում, «անորոշության» մարտավարությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ վաղօրոք հայտարարված հավակնորդը կարող է ընկնել մրցակիցների և ընդդիմադիրների «հարվածի» տակ: Ակնհայտ է, որ նման իրավիճակը Պուտինին առավելություններ և հնարավորություններ է տալիս: Նշենք դրանցից մի քանիսը.

- Անորոշությունը խթանում է մրցակցությունն ընտրանու տարբեր խմբավորումների միջև: Դա, իր հերթին, բացահայտում է այս կամ այն խմբավորման և առաջատար անձի ներուժը, «մարտական» որակները, մտադրությունները և հնարավորությունները: Նման մթնոլորտը ստիպում է հանրային ելույթներ ունենալ, ինչը թույլ է տալիս որոշել այս կամ այն հավակնորդի կերպարի (*իմիջի*) ընկալումը հանրության կողմից: Այդ ամենի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և վերլուծությունը թույլ են տալիս Պուտինին ապագայում առավել հիմնավորված ընտրություն կատարել:
- Անորոշությունը ստեղծում է իրավիճակներ, որոնք թույլ են տալիս իրատեսական գնահատել հնարավոր «հետնորդի»՝ Պուտինի նկատմամբ ունեցած անձնական նվիրվածության և հավատարմության աստիճանը: Այս խնդիրը հատկապես կարևոր է, քանի որ կան բոլոր հիմքերը կարծելու, թե Պուտինը գոնե առայժմ դեմ է երրորդ անգամ վերընտրվելուն (ըստ որոշ մոտեցումների՝ նման տարբերակը գործնականում բացառվում է), սակայն ցանկանում է (գուցե և պարտադրված է) 2008-ից հետո էլ շարունակել կարևոր դերակատարում ունենալ ՌԴ քաղաքական կյանքում: Դա հնարավոր է միայն ապագա նախագահի հետ հատուկ պայմանավորվածությունների և վերջինիս անձնական հավատարմության առկայության պարագայում: Նկատենք, որ ՋԼՄ-ում պարբերաբար հայտնվում են նյութեր, որտեղ Պուտինի համար 2008-ին կանխատեսվում են ամենազանազան պաշտոններ, սկսած *Գազպրոմի* կամ *Հյուսիսային-եվրոպական գազատարի* ընկերության ղեկավարից մինչև վարչապետ կամ «Եդինայա Ռոսիայի» նախագահ և այդ կարգավիճակով՝ Դոմայի նախագահ: Որպես ավելի իրատեսական կարելի է դիտարկել Պուտինի՝ ՌԴ Պետխորհրդի նախագահ դառնալու վարկածը: Այդ կառույցը (ներկայում այն գլխավորում է նախագահը) սահմանադրական ձևակերպում չունի, սակայն նրա իրավասությունները կարելի է ընդլայնել Դոմայի ընդունած որոշման հիման վրա: Լինելով Պետխորհրդի նախագահ՝ Պուտինը կարող է իր հեղինակությամբ վերահսկել իրադրությունը երկրում, ինչպես դա ժամանակին անում էր Դեն Սյաոպինը Չինաստանում: Այս վարկածի օգտին է անուղղակիորեն խոսում նաև այն, որ ՋԼՄ-ում պարբերաբար քննարկվում է այդ կառույցը Պետերբուրգ տեղափոխելու խնդիրը, և Պետխորհրդի որոշ նիստեր արդեն իսկ կայացել են այդ քաղաքում:

«Հետնորդի» հարցում տիրող անորոշությունը հատկապես ազդում է մարզային և ոչ այնքան բարձրամակարդակ մոսկովյան նոմենկլատուրայի վրա. այդ շերտը, չունենալով գործելու այլ լծակներ, այսօր ցուցաբերում է «նախաձեռնություն ներքևից»՝ առաջարկելով կատարել սահմանադրական փոփոխություններ և երրորդ անգամ վերընտրել Պուտինին: Այլ կերպ են ընթանում գործերը «բարձր» ոլորտներում:

**Գաղափարախոսական գործոնը և կադրային փոփոխությունները.** Պուտինի վարչակազմն առանձնահատուկ կարևորում է գաղափարախոսական խնդիրները: Պաշտոնապես ընդունված է համարել, որ այդ խնդիրներն առանցքային են Ռուսաստանի համար՝ ելնելով այն պրագմատիկ թեզից, որ առանց գաղափարախոսության Ռուսաստանն անհնար է կառավարել: Այդ ոլորտի պատասխանատուն է նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վլադիսլավ Սուրկովը, որը վերջերս հնչեցրեց «ինքնիշխան դեմոկրատիայի» (տերմինն առաջին անգամ կիրառել են Թայվանի իշխանությունները՝ այդպիսով հակադրելով իրենց ժողովրդավարությունը մայրցամաքային Չինաստանի սոցիալիստական համակարգին) վերաբերյալ տեսակետը: Համաձայն այդ դրույթի՝ արևմտյան (և հատկապես անգլոսաքսոնյան) պատկերացումները ժողովրդավարության վերաբերյալ ունիվերսալ բնույթ չեն կրում և այդպիսով չեն կարող հիմք ծառայել այլ երկրների ներքին գործերին միջամտելու համար:

Այս ամռանը հնչեցված «ինքնիշխան դեմոկրատիա» դրույթը լայնորեն տարածվել էր և տեղ էր գտել «եղիստոսների» ծրագրային փաստաթղթերում: Հատկանշական է նաև, որ այդ բառակապակցությունը սկսել էր կիրառել նաև պաշտպանության նախարար Ս.Իվանովը: Սակայն շուտով «ինքնիշխան դեմոկրատիա» ձևակերպման դեմ հանդես եկավ փոխվարչապետ Դ.Մեդվեդևը, իսկ վերջերս (ավելի փափուկ արտահայտություններով)՝ նաև Պուտինը:

Ակնհայտ է, որ գաղափարախոսական տերմինների վերաբերյալ բանավեճն արտահայտում է Կրեմլի ներսում ընթացող «միջկլանային» պայքարը: *Նման է նրան, որ ելնելով իրեն հայտնի նկատառումներից՝ Պուտինը ձգտում է (գոնե առայժմ) նվազեցնել «պիտերյան-չեկիստական» թևի (որի առաջատարներից են Ս.Իվանովը, Ն.Պատրուշևը) ազդեցությունը և բարձրացնել «պիտերյան-համալսարանական» (որի կազմում են Պուտինի շրջապատի մարդիկ դեռևս Սանկտ Պետերբուրգի համալսարանում աշխատելու ժամանակվանից, որոնցից նշենք Դ.Մեդվեդևին և Դ. Կոզակին) խմբավորման հեղինակությունը:* Այդ միտումը նկատվում է նաև նախագահի այլ գործողություններում:

Օրերս Պուտինի հրամանագրով աշխատանքից ազատվեցին մաքսանենգության մեջ մեղադրվող մի շարք բարձրաստիճան չեկիստներ: Դրանց թվում էին *ՖՄԲ Սեփական անվտանգության վարչության* պետ, գեներալ-լեյտենանտ Ալ.Կուլյարյաժկինը և *Գործունեությունն ապահովող ծառայության* պետ, գեներալ-գնդապետ Ս.Շիշինը: Նախագահի այդ քայլը մոսկովյան մի շարք փորձագետներ մեկնաբանում են որպես ՖՄԲ տնօրեն Պատրուշևի դեմ ուղղված քայլ: Նման վարկածը չի կարելի բացառել, քանի որ այն հաստատվում է այլ անուղղակի վկայություններով: Օրինակ՝ Վլադիմիր Ուստինովի պաշտոնանկությունը (նրա ներկայիս իրավասությունները՝ որպես Արդարադատության նախարար, դժվար է համեմատել Գլխավոր դատախազի հնարավորությունների հետ) կապվում էր բարձրաստիճան պաշտոնյաների դեմ պայքարում նրա՝ ավելորդ եռանդ ցուցաբերելու հետ: Սակայն պետք է հաշվի առնել, որ առանց Կրեմլի աջակցության՝ Ուստինովը դժվար թե ինքնուրույն քայլեր կատարեր, և կարելի է կարծել, թե այդ խնդրում նրա հենարանն էր նախագահի օգնական և նախագահի վարչակազմի ղեկավարի տեղակալ Իգոր Սեչինը: Վերջինս «պիտերյան» թիմից է և նախկինում ծառայել է ռազմական հետախուզությունում: Հատկանշական է, որ Սեչինի դուստրը Ուստինովի տղայի կինն է:

«Համալսարանական պիտերցիների» թիմի ուժեղացման մասին է վկայում նաև Դ.Կոզակի (որն, ի դեպ, Պուտինի 2003թ. նախընտրական շտաբի պետն էր և ժամանակին համարվում էր որպես վարչապետության ամենահավանական թեկնածու) իրավասությունների մեծացումը. վերջերս նա նշանակվեց Հարավային դաշնային օկրուգի սոցիալ-տնտեսական հանձնաժողովի նախագահ, որի կազմում են 11 դաշնային նախարար և 13 մարզի ղեկավար: Այդ հանձնաժողովն անվանում են Հարավային դաշնային օկրուգի կառավարություն:

**Հետևություններ.** Կարելի է արձանագրել, որ ռուսաստանյան վերնախավում ընթացող մրցակցությունը սրվում է, և այդ միտումը սաստկանալու է: Առայժմ ամեն ինչ վկայում է այն մասին, որ նախագահ Պուտինը վերահսկում է իրադրությունը: Միևնույն ժամանակ, ներկա պահին դիրքային պայքարում որոշակի առավելության է հասել «պիտերյան-համալսարանական» թիմը: Տպավորությունն այն է, որ եթե Պուտինն այսօր կատարեր իր ընտրությունը,

ապա նախագահի և վարչապետի պաշտոնները «կտրվեին» Դ.Մեդվեդևին և Դ.Կոզակին (չբացառելով, որ «հետնորդը» կարող է լինել հենց վերջինս): Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ այդ գործիչների *իս/իջը* և վարկանիշը, ինչպես ցույց են տալիս տարբեր սոցիարցումների արդյունքները, առայժմ բավարար բարձրության վրա չեն: Մակայն պայքարը դեռ նոր է սկսվել, և իրատեսական կանխատեսումները հնարավոր են միայն 2007-ի կեսերից սկսած:

*Գազիկ Հարությունյան  
«Նորավանք» հիմնադրամ*

## ԲՈՒՐԳԱՍ-ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՍ ՆԱՎԹԱՏԱՐԸ

Սեպտեմբերի 4-ին Աթենքում Ռուսաստանի, Հունաստանի և Բուլղարիայի ղեկավարները հռչակագիր ստորագրեցին Բուրգաս (Բուլղարիայի Սևծովյան ափ) - Ալեքսանդրոպոլիս (Հունաստանի Ադրիատիկ ծովի նավահանգիստ) նավթատար կառուցելու մասին 2006թ. Պայմանագիր կնքելու վերաբերյալ: Այս նավթատարը պետք է լցվի ռուսական նավթով, որը նավերով կտեղափոխվի Բուրգաս Նավոռոսիյսկից: Չնայած ռուսական լրատվամիջոցների լավատեսական տեղեկատվությանը՝ նավթատարի կառուցման մասին հիմնական համաձայնագիրը դեռ կնքված չէ: Կառուցվելիք նավթամուղը հնարավորություն կունենա տարեկան մինչև 50 մլն տ նավթ տեղափոխել Սև ծովից Ադրիատիկ և իր այս կարողությամբ կհավասարվի Բաքու-Ջեյհան նավթատարին (միջազգային էներգետիկ հիմնախնդիրների շուրջ տե՛ս նաև *Հավելված 1-ը*): Ստորև ներկայացվում է այն հետևանքների վերլուծությունը, որոնք կարող է ունենալ նավթատարը Թուրքիայի և նրա էներգետիկ հեռանկարների համար:

### *Թուրքիայից Ռուսաստանի կախվածության նվազում*

Բոսֆորն ու Դարդանեղբ քաղաղ դարեր Ռուսաստանի համար ունեցել են ռազմավարական նշանակություն: 20-րդ դարի երկրորդ կեսին, ռազմաքաղաքական նկատառումներից զատ, նեղուցները կարևոր դեր ստացան նաև ռուսական նավթն Արևմուտք արտահանելու գործում: 21-րդ դարի սկզբին նեղուցներով արտահանվող ռուսական ապրանքների գնացուցակում նավթային բաղադրիչը կազմում է ընդհանուր արժեքի 67%-ը:

1990-ականներին Թուրքիայի կառավարությունը խափանում էր նեղուցների աշխատանքը, ինչը նպատակ ուներ խրախուսել Կասպիցից Միջերկրական նավթատարի կառուցումը: Այս նպատակի իրագործումն ամբողջովին ավարտվեց 2006թ.: Բաքու-Ջեյհանը և նրա շահագործման ռազմավարությունը նպատակուղղված կերպով Ադրբեյջանի և Ղազախստանի նավթի արտահանումն անջատում են ռուսական նավթի արտահանման ճանապարհից, ինչը հնարավորություն կտա Թուրքիային և նրա դաշնակիցներին ավելի ակտիվ օգտագործել նեղուցները Ռուսաստանի հետ հարաբերությունների վրա ազդելու նպատակով: Սա, իր հերթին, կարող է ստիպել Ռուսաստանին Թուրքիայի հետ ավելի ակտիվ աշխատել Սամսուն-Ջեյհան նավթատարի կառուցման ուղղությամբ, ինչը թույլ կտա Ռուսաստանին իր նավթը Սև ծովից արտահանել շրջանցելով նեղուցները: Սակայն նման հեռանկարները հրապուրիչ չեն կարող լինել Ռուսաստանի համար: Վերջինիս ներկա էներգետիկ քաղաքականությունը հիմնված է երկու հենաքարերի վրա՝ *անխափան արտահանում* և *արտահանման ճանապարհի վերահսկում*: Թուրքիայի դեպքում այս երկու հենաքարերի խարխուլումն ակնհայտ է:

Օգտագործելով Բուլղարիայի և Հունաստանի տարածքները նավթի արտահանման համար՝ Ռուսաստանը կարծես թե կհասնի իր նպատակների իրագործմանը: Սա պայմանավորված է ոչ թե նրանով, որ հույներն ու բուլղարացիները չափից ավելի հուսալի են կամ էլ ռուսամետ: Ռուսաստանը պարզապես գիտակցում է, որ.

- Բուլղարիան կախված է ռուսական նավթի և առավել ևս գազի մատակարարումից, ինչը թույլ չի տա նրան խափանել նավթատարի աշխատանքները՝ անգամ հաշվի առնելով Սոֆիայի համար ազդեցիկ Վաշինգտոնի հատուկ կարծիքները: Բացի այդ, տարանցման շահույթը կարևոր դեր կխաղա Բուլղարիայի ոչ մեծ պետական բյուջեի համար:
- Հունաստանը հնարավորություն կստանա նվազեցնել կախվածությունը թուրքական նավթ-գազատարներից և նեղուցներից՝ սեփական էներգետիկ անվտանգությունն ապահովելու համար:

## ***Թուրքիայից Հունաստանի կախվածության նվազում***

Վերջին տասնամյակում Հունաստանում վարվող «թուրքական քաղաքականությունը» ձևավորվել է էներգետիկ գործոնի ազդեցությամբ: Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցում Հունաստանի համաձայնությունը մեծ մասամբ պայմանավորված է հենց այս գործոնով: Հունաստանի համար հեռանկարային բոլոր էներգետիկ ծրագրերը (Իրան-Թուրքիա-Հունաստան-Եվրոպա, Ռուսաստան-Սև ծով-Թուրքիա-Եվրոպա գազատարներ) նախատեսում են դրանցում Թուրքիայի ակտիվ և, կարելի է ասել, առանցքային մասնակցությունը:

Բուլղարիայում նավթատարի կառուցումն այս տեսակետից ոչ միայն նվազեցնում է Հունաստանի կախվածությունը թուրքական տարածքով անցնող խողովակաշարերից, այլև հենց Հունաստանն է վերածում միջազգային էներգետիկ անվտանգության կարևոր գործոնի: Եվ ի տարբերություն Բաքու-Ջեյհանի, որի «լցումում» կախված է լինելու մի շարք տարածաշրջանային զարգացումներից (Ղազախստանից Բաքու նավթատարի կառուցում, կայունություն Ադրբեջանում և Վրաստանում, թուրքական քրդերի հիմնախնդիր, Իրանի միջուկային ծրագիր և այլն), ապա Նովոռոսիյսկ հասնող ռուսական և դազախական նավթի քանակը Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթատարի գործունեությունը կդարձնի երկարաժամկետ և կայուն:

*Թուրքիայից կախվածության նվազումը հունական դեկավարության կողմից կարող է օգտագործվել Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցում Աթենքի տեսակետն ավելի կոշտացնելու համար:*

## ***Բոսֆորի և Դարդանելի նեղուցների միջազգային նշանակության թուլացում***

Որքան էլ տարօրինակ թվա, Թուրքիան կարծես թե ինքն իր ձեռքերով նվազեցրեց սեփական, եթե կարելի է ասել, քաղաքական աշխարհագրության դերը: Ջեյհանի վերածումը պետության հիմնական էներգետիկ դարպասների և դրանից բխող «նեղուցային քաղաքականությունը» հանգեցրին Բոսֆորի և Դարդանելի քաղաքական ու տնտեսական նշանակության նվազմանը: Ակնհայտ է, որ Թուրքիան չի զրկվի իր կարևոր դերից, սակայն Անկարան կորցնում է մի կարևոր խաղաքարտ, որն արդեն դարեր շարունակ օգտագործել է տարածաշրջանային և անգամ համաշխարհային քաղաքական ու տնտեսական գործընթացների վրա ազդելու նպատակով:

Ջեյհանը թուրքական նավահանգիստ է: Սակայն նրա կայուն և երկարաժամկետ աշխատանքը վերջին հերթին է կախված լինելու թուրքական կառավարության քաղաքականությունից: Նավահանգստի էներգետիկ նշանակությունը կարող է խարխիվել ընդամենը մեկ օրում, ասենք՝ եթե Վրաստանում սկսվի նոր քաղաքական ճգնաժամ, կամ էլ եթե քրդական ահաբեկչությունը գրավի Թուրքիայի «տարանցման» գոտիները:

Իսկ Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղի կառուցումը վերջնականապես կզրկի Բոսֆորի և Դարդանելի նեղուցներն իրենց էներգետիկ նշանակությունից և դուրս կմղի դրանք միջազգային էներգետիկ անվտանգության կարևորագույն գործոններ հանդիսացող Սուեզի, Հորմուզի, Մալակայի ազդեցիկ նեղուցների շարքից:

***Մևակ Սարուխանյան  
«Նորավանք» հիմնադրամ***



## Էներգետիկ գործընթացների մասին

2006թ. օգոստոսի 27-ից սեպտեմբերի 1-ը Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում տեղի ունեցավ Բարեփոխումների խմբի կոնֆերանսը՝ նվիրված էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներին:

Կոնֆերանսի հիմնական կազմակերպիչներն էին Գերմանիայի Դաշնության Բնական ռեսուրսների նախարարությունը, Ֆոլքսվագենի հիմնադրամը, Մերիլենդի, Բեռլինի համալսարանները, Նորվեգիայի կառավարման բարձրագույն դպրոցը՝ «Շել» նավթային կոնցեննի մասնակցությամբ:

Արդեն 10 տարի ամեն ամառ կազմակերպվող կոնֆերանսի հիմնական նպատակն էր ԵՄ էներգետիկ անվտանգության հեռանկարների քննարկումը: Քննարկումների ընթացքում հնչած հիմնական դրույթներն էին.

1. 21-րդ դարի առաջին կեսի հիմնական ածխաջրածնային վառելիքի դեր պետք է խաղան բնական գազը և դրանից ստացված վառելիքի այլ տեսակները, որոնք երկրորդ պլան կմղեն նավթը՝ թուլացնելով դրա առաջնային նշանակությունը: Գազային հիմնական դերակատարներ են լինելու Ռուսաստանը և Իրանը, որոնց հնարավոր ռազմավարական էներգետիկ դաշինքը հիմք կարող է հանդիսանալ գազային ՕՊԵԿ-ի ստեղծման համար: Այն կունենա ավելի մեծ քաղաքական կշիռ, քան նավթային ՕՊԵԿ-ը: Կատարը, որը նույնպես նշանակալի գազային ռեսուրսներ ունի, կորցնում է գլոբալ նշանակությունը հիմնականում այն պատճառով, որ չունի գազի արտահանման գազատարային հնարավորություններ՝ փաստորեն փակված լինելով անկայուն Մերձավոր Արևելքի և Իրանի միջև:
2. Իրանական և ռուսական գազի Արևելք արտահանման ծրագրերի իրականացմանը հիմնականում կխանգարի Քիոթոյի համաձայնագիրը, որը սահմանափակում է  $CO_2$ -ի արտանետման հնարավորությունը, որն իր հերթին սահմանափակում է Արևելքում նոր ՋԷԿ-երի կառուցման հնարավորությունը: Մինչդեռ այսօր միայն ԱՄՆ-ը, Ճապոնիան և ԵՄ-ը ունեն արտանետումների սահմանափակման տեխնոլոգիաներ, ինչը պետք է բարենպաստ դարձնի գազի վաճառքն առաջին հերթին ԵՄ-ին, որը, ի տարբերություն արևելյան պետությունների, հնարավորություն կունենա խուսանավել թույլատրելի էկոլոգիական սանդղակների պահպանման սահմաններում:
3. Ռուսաստանի արտաքին քաղաքական գծի հիմնական բաղադրամասերից է ԱՊՀ մտնող և ԱՊՀ-ից դուրս եկող գազատարների ձեռքբերումը: ԵՄ-ի համար ամենակարևորը Ուկրաինայի հակազդեցությունն է, քանզի տարեկան 195 մլրդ<sup>3</sup> կարողություն ունեցող ուկրաինական գազատարները կարող են օգտագործվել դազախական, թուրքմենական և իրանական գազը ԵՄ ներկրելու համար:
4. Վերջին 5 տարվա ընթացքում ԵՄ քաղաքական և տնտեսական քաղաքականությունն ավելի քիչ է ազդում ԱՊՀ էներգետիկներ ունեցող պետությունների վրա: Սա վերաբերում է առաջին հերթին Ռուսաստանին և Ադրբեջանին: Ադրբեջանի հետ պայմանավորվածությունների ձեռքբերման գործընթացում վերջին 3 տարիներին եվրոպական կոնցեննները և մայրաքաղաքները հաճախ են սկսել դիմել ԱՄՆ միջնորդությանը:
5. Գազի նշանակության մեծացումն ուղղորդվելու է էժան բիոդիզելի ստեղծմանը, որի ռեսուրսային հիմնական աշխարհամասն Աֆրիկան է, ինչպես նաև Բրազիլիան ու Ինդոնեզիան: Այս տարածաշրջաններում արևմտյան քաղաքականության հիմնական ուղղություններից պետք է լինի պետությունների չկայացման խրախուսման ուղին, որի իրագործումը թույլ չի տա արաբական նավթային պետությունների նման նոր ազդեցիկ կենտրոններ ձևավորել:

### **Ադրբեջանի մասին զեկույցը և քննարկումներ**

Կոնֆերանսում «Ադրբեջան. նավթային պետության ձևավորում» հատուկ զեկույցով հանդես եկավ Բեռլինի և Բաքվի Խազարի համալսարանի աշխատակից Աֆիգ Ալիևը: Նրա զեկույցը կարծիքների փոխանակման տեղիք տվեց Ադրբեջանում տեղ գտած գործընթացների վերաբերյալ:

### **Մի քանի դրվագ ադրբեջանցի մասնակցի զեկույցից**

- Ադրբեջանի իշխանական թևում ակտիվանում են այն մարդկանց դիրքերը, որոնք հանդես են գալիս Թուրքիայից և Արևմուտքից ավելի անկախ քաղաքականության և Ռուսաստանի հետ ավելի սերտ համագործակցության զարգացման օգտին: Սա հիմնականում բացատրվում է նրանով, որ Ռուսաստանը սկսել է ավելի կարևոր տեղ զբաղեցնել Ադրբեջանի՝ նավթային փողերի լվացման քաղաքականության մեջ:

- Նավթի վաճառքում «գորշ գումարների» չափաքանակը կազմում է ընդհանուր վաճառքի 40%-ը: Այս հոսքը ղեկավարվում է Ի.Ալիևի և նախիջևանյան կլանի կողմից: Գումարների մեծ մասը հոսում է դեպի Մեծ Բրիտանիայի բանկեր:
- Նավթային սեկտորից հետո ամենակոռումպացված հատվածը բանակն է: Պաշտպանության նախարարության բյուջեի ավելացումը տեղի է ունենում այն բանի քաջ գիտակցությամբ, որ գումարների հսկայական մասը «մարսվում» է զինվորական ղեկավարների կողմից: Ռազմական բյուջեի ավելացումը ռազմական գործողությունների հնարավոր վերսկսման նպատակով չի իրականացվում: Պաշտպանության նախարարությանը հատկացվող գումարները «հետապնդում» են հիմնականում մեկ նպատակ. «գնել» գեներալների լոյալությունը՝ տալով նրանց հարստանալու նոր հնարավորություններ: Այսպիսի քաղաքականության հիմնական պատճառներն են. ա) զինվորական գործիչները Հեյդար Ալիևի մահից հետո սկսել են ավելի շատ խոսել այն մասին, որ նավթի վաճառքի շնորհիվ ստացվող գումարները գնում են անհայտ ուղղությամբ և ծառայում են հասարակության ընդամենը մեկ մասին: Իսկ իրենց՝ «հայրենիքի պաշտպաններին», «հայրենիքի հարստությունից» բաժին չի հասնում: Ռազմական ծախսերի ավելացումը, այսպիսով, «հայրենիքի հարստության» «արդար վերաբաշխման» մաս է կազմում, բ) Ի.Ալիևի շրջապատում կան մարդիկ, որոնք պնդում են, որ հարկավոր է «կերակրել» գեներալներին, որոնք պետք է աջակցեն Ի.Ալիևին վերընտրվել նախագահական ընտրությունների ժամանակ: Դրանից հետո պետք է իրականացնել պաշտպանության նախարարության «գլխատում»: Գլխատման անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ Ադրբեյջանի պաշտպանության նախարարությունում ուժեղ են «գյանջացիների» դիրքերը, որոնք «նախիջևանցիների» հիմնական թշնամիներն են:
- Իլիամ Ալիևի իշխանությանն սպառնացող հիմնական վտանգը գալիս է մի քանի հասարակական-էթնիկական խմբերից (ըստ կարևորության և հնարավորությունների). գյանջացիներ և լոյալ թվացող գեներալներ, Բաքվի՝ 1990-ականների սկզբին ձևավորված «նոր տերեր», որոնք դժգոհ են սեփական դիրքերի թուլացումից, լեզգիներ, իսլամականներ, թալիշներ:

## ВАШИНГТОН И МОСКВА ИДУТ НА ИЗМЕНЕНИЕ РАКЕТНОГО БАЛАНСА В МИРЕ

США и Россия на пороге инициирования возможного изменения ракетного баланса как между двумя странами, так и в глобальном масштабе. 27 августа с.г. в г.Фэрбанксе на Аляске прошла встреча между министрами обороны России и США Сергеем Ивановым и Дональдом Рамсфелдом, приуроченная к открытию «Мемориала лендлизу». Здесь стороны сделали ряд заявлений, которые говорят о возможном серьезном пересмотре устоявшегося баланса сил в сфере ракет большой и средней дальности, а также систем ПРО.

Дональд Рамсфелд сообщил, что Вашингтон рассматривает вариант переоснащения части межконтинентальных баллистических ракет с заменой ядерных боеголовок на обычные. Для Соединенных Штатов подобный ход официально является попыткой усилить противодействие международному терроризму и получить возможность нанесения превентивных ударов по базам террористов на больших расстояниях. По словам Рамсфелда, уже в ближайшие 5-10 лет может возникнуть серьезная необходимость в применении переоснащенных ракет в целях противодействия международному терроризму.

Для российской стороны подобный подход оказался неприемлем. В частности, одной из озвученных проблем оказалась невозможность определения типа потенциально запущенной ракеты. Системы слежения будут не способны определить с каким зарядом – ядерным или простым – была запущена ракета со стороны США. Сергей Иванов высказался против предложений Рамсфелда. Он выразил сомнение в необходимости оснащать столь мощные и дорогостоящие ракеты обычной взрывчаткой: «Насколько я понимаю, речь идет о том, чтобы максимально расширить возможности для нанесения превентивных ударов». Иванов отметил, что теоретически можно использовать крылатые ракеты большой дальности: «Кроме того, существуют теоретические возможности использования ракет средней дальности, но США и Россия не могут ими обладать в отличие от всех других государств, многие из которых имеют эти ракеты».

Фактически, в ответ на предложение Рамсфелда Минобороны России выступило с заявлением о возможном выходе РФ из Договора о ракетах средней и малой дальности (РСМД). Согласно этому Договору, подписанному в 1987г., США и СССР уничтожили все РСМД дальностью от 500 до 5000 км. В день встречи двух министров оборонное ведомство России распространило сообщение о проработке возможности выхода Российской Федерации из этого договора. Некий неназванный представитель МО РФ сделал довольно жесткое заявление о том, что Россия может в одностороннем порядке выйти из Договора, так как подобный прецедент уже есть – выход США из Договора по противоракетной обороне 1972 года. «Через 20-30 лет такая страна, как Фиджи, или кто угодно будет обладать ракетами средней дальности. Ими не будут обладать только США и Россия. Американцы прекрасно понимают, что российские ракеты средней дальности даже гипотетически не достигают территории США, если только не будут установлены на Чукотке, а там они точно не будут развернуты», – заявил представитель Минобороны. По его словам, основной побудительной причиной является изменение геополитической ситуации в мире, появление на Евразийском континенте большого количества стран, производящих собственные оперативно тактические ракеты, либо имеющих на воору-

жении ракеты иностранного производства: «У нас есть другие соседи, в отношении которых было бы неплохо иметь не межконтинентальные баллистические ракеты, а именно ракеты средней дальности, причем не обязательно с ядерными боеголовками».

Другой темой переговоров стали системы противоракетной обороны (ПРО). В ответ на попытки Соединенных Штатов, вышедших из договора ПО ПРО еще в 2001г. (официально США вышли из договора в июне 2002г.), начать развертывать системы на территории Европы, Сергей Иванов призвал Вашингтон действовать в этом направлении максимально прозрачно, «чтобы не вызвать стремление другой стороны активно создавать средства преодоления этих систем ПРО».

Оба заявления министра обороны взаимосвязаны друг с другом, так как средствами преодоления систем ПРО могут быть как раз крылатые ракеты и ракеты средней дальности.

Вашингтон начал переговоры с рядом европейских стран о развертывании систем ПРО на их территории еще в прошлом году. Предполагается, что работы должны закончиться в 2011г., а стоимость системы, которая включает в себя развертывание космической группировки и радиолокационных систем (РЛС) раннего предупреждения, составит \$75,6 млрд. В своих планах Вашингтон весьма активно и удачно использует нагнетание истерии вокруг иранской ядерной угрозы.

Среди возможных партнеров Вашингтона назывались Великобритания, Польша, Чехия и Болгария. Британское руководство пока что дало согласие на модернизацию американских радарных комплексов, установленных на британской базе ВВС Файлиндэйлс в Северном Йоркшире и размещение системы электронного наблюдения на военной базе Менвисхилл. В Чехии вопрос размещения ПРО предполагается поставить на всенародный референдум и решение может быть принято лишь по прошествии многих месяцев. Польша дала фактическое согласие на участие в программе. В ходе визита в США премьер-министр Польши Ярослав Качиньский дал согласие на размещение на польской территории 10 установок противоракет.

Планы США по размещению систем ПРО имеют далеко идущие цели. С одной стороны, провоцируя Россию на выход из договора по РСМД, Вашингтон добивается устрашения европейских государств, которые однозначно увидят в подобных действиях Кремля угрозу для своей безопасности. Тем самым США вовлекают Европу в ядерную игру, причем на уровне актора второго плана. Очевидно, что размещение противоракет в Европе направлено против России, а не Ирана, который не имеет никаких оправданных намерений для использования своего оперативно тактического вооружения против европейских стран. При этом Европа становится еще более уязвимой для атак террористических группировок, которые воспримут размещение систем ПРО как продолжение западной экспансии против исламского мира.

С другой стороны, США не остановятся на этом. Используя продолжающееся развитие ракетных сил Северной Кореи, Вашингтон попытается пойти на усиление своей роли в Тихоокеанском регионе. В частности, уже в 2005г. правительство Японии приняло решение разработать совместно с США систему ПРО, а после ракетных испытаний КНДР в июле этого года Токио укрепился в своем намерении (см. *Глобус*, #1). Хотя не исключено, что ракетная эскалация может привести к обратному эффекту и вызвать кооперирование таких противоборствующих сил, как Китай, Япония и Тайвань. При этом странам региона потенциально уже может угрожать не только КНДР, но и Россия, которая хочет начать развертывание группировки ракет средней и малой дальности (о ядерных арсеналах США и России см. *Приложение 2*).

В целом можно сказать, что предложения Рамсфелда о переоснащении ракет большой дальности не выражают истинных стремлений США. Оснащение дорогостоящих баллистических ракет стратегического оснащения обычными зарядами будет весьма малоэффективно. Во-первых, их точность оставляет желать лучшего, в отличие от высокоточного оружия, которым обладают США. Во-вторых, мощность заряда также весьма малоэффективна: масса головного заряда подобных ракет в среднем равняется одной тонне. С учетом небольшой точности – круговое вероятное отклонение (КВО) у самых лучших ракет составляет порядка 200-250 метров, – обыкновенный заряд такой мощности неспособен причинить серьезного урона террористическим организациям, особенно с учетом их подготовленности к подобным ударам, что красноречиво показали укрепления *Хизбалла* в Ливане.

Вероятнее всего, это начало американской стратегии по изменению баланса в мире. С одной стороны, США вовлекают Европу в свои планы по ПРО. С другой – начало выхода России из Договора по ракетам средней дальности приведет к росту напряженности в еврозоне, тем самым вынудив страны Евросоюза подключиться к новой гонке вооружений. Наконец, наиболее серьезные сдвиги могут произойти в Тихоокеанском регионе, где ракетная угроза со стороны КНДР воспринимается соседними странами как реальность.

Российский действующий (оперативный) стратегический ядерный арсенал в настоящее время представлен примерно 6000 стратегическими ядерными ББ (боевых блоков) на 1200 единицах носителей: МБР и бомбардировщиках ДА, способных доставлять ядерные ББ к целям. Общая оценочная мощность этих ББ составляет около 2900 Мт в тротиловом эквиваленте.

Российские стратегические МБР наземного базирования в составе РВСН развернуты на 19 ракетных базах. Российские стратегические ПЛАРБ с БРПЛ действуют в составах Северного и Тихоокеанского флотов ВМФ с пяти военно-морских баз – баз ПЛАРБ.

Стратегические бомбардировщики дальней авиации России базируются на трех авиабазах России. Указанные силы составляют стратегический наступательный потенциал и арсенал России.

Дополнительно к этому арсеналу в зоне Москвы развернута оборонительная система ПРО в составе 100 противоракет-перехватчиков класса «поверхность (земля) – воздух», в том числе: 64 ПУ ЗУР ПРО типа SH-08 «Газель» и 36 ПУ ЗУР ПРО типа SH-11 «Гордон». Эти противоракеты ПРО могут снаряжаться ядерными ББ. Однако, по ряду сведений, ядерные боеголовки с них, возможно, отстыкованы.

Кроме того, по данным Национального комитета по оборонным ресурсам США (*National Resources Defence Council*), Россия также располагает внушительным оперативно-боевым арсеналом тактического/оперативно-тактического ядерного оружия в составе до 4000 ед. ядерного оружия (боеголовок и др.), в том числе: до 1100 ЗУР ПВО (ПУ ЗРК); до 1000 КР/УР класса «воздух–поверхность», а также арсеналом тактических ракет малой дальности и ядерных бомб. ВМФ России располагает, по этим оценкам, до 1200 военно-морских ядерных боеголовок на снаряжении КРМБ кораблей и подводных лодок, а также противолодочного вооружения.

По оценке указанного комитета США, в России имеется до 10000 ядерных боеприпасов «неопределенного статуса» – боеприпасов, ожидающих разоружения, или боезарядов, находящихся в резерве. Если включить эти 10000 единиц боезарядов в российский ядерный арсенал, тогда общий арсенал ядерных боеприпасов России составит около 21000 единиц.

*Самвел Мартиросян*

Оценки ядерных арсеналов США и России на основе данных  
*The Nuclear Weapon Archive*

Ядерный арсенал США на декабрь 2000 года

Наименование оружия		Число ракетоносителей	Загружаемых боеголовок		Статистика по боеголовкам		
Ракета	Боеголовка/РГЧ		Число	Заряд (Мт)	Число	Общий мегатоннаж	Эквивалентный мегатоннаж
<b>Межконтинентальные баллистические ракеты</b>							
Minuteman III	W-62/Мк-12	200	3	0.17	600	102	184
Minuteman III	W-78/Мк-12А	300	3	0.335	900	327	470
Peacekeeper (MX)	W-87-0/Мк-21	50	10	0.30	500	150	224
<b>Баллистические ракеты подводных лодок</b>							
Trident I C4	W-76/Мк-4	192	8	0.10	1536	154	331
Trident II D5	W-76/Мк-4	192	8	0.10	1536	154	331
Trident II D5	W-88/Мк-5	48	8	0.475	384	182	234
<b>Крылатые ракеты</b>							
AGM-86В АLCM	W-80-1	500	1	0.15	1000	150	282
AGM-129 АСМ	W-80-1	460	1	0.15	460	69	130

Носители оружия	Количество носителей		Набор оружия		Статистика по боеголовкам		
	Действующ.	Всего	Тип	Число	Число	Общий мегатоннаж	Эквивалентный мегатоннаж
<b>Подводные лодки</b>							
Ohio Class	17	18	Ракеты Trident I/II	24	3264	470	855
<b>Бомбардировщики</b>							
B-52H Stratofortress	44	71	Бомбы B-61, B-83; крылатые ракеты АLCM, АСМ	20	880	705	728
B-1B Lancer	48	93	Крылатые ракеты АLCM, АСМ	20	960	144	271
B-2A Spirit	10	13	Бомбы B-61-7/11, B-83	16	160	147	147

Число боеголовок	Общий заряд	
	Мт	Эквивалентных Мт
Общая сумма	7339	2045
		2879

Ядерный арсенал России на январь 2001 года

Система доставки	Год принятия на вооружение	Радиус действия (км)	Полезная нагрузка (кг)	КВО	Боеголовки
<b>Межконтинентальные баллистические ракеты</b>					
SS-18 M4/M5/M6 Satan; PC-20, P-36H Воевода	1979	11 000	8 800	250	10 x 0.550/0.750; 1 x 25 Мт
SS-19 M3 Stiletto; PC-18, УР-100НУ	1979	9 000	4 350	300	6 x 0.750
SS-24 M1/M2 Scalpel; PC-22, РТ-23У Молодец	1987	10 000	4 050	200	10 x 0.550
SS-25 Sickle; PC-12M, Тополь	1985	10 500	1 000	200	1 x 0.550
SS-27 Sickle; PC-12M2 Тополь-М	1985	10 500	1 000	200	1 x 0.550
<b>Баллистические ракеты подводных лодок</b>					
SS-N-18 M1 Stingray; PCM-50	1978	6 500	1 650	400	3 x 0.500

Система доставки	Год принятия на вооружение	Радиус действия (км)	Полезная нагрузка (кг)	КВО	Боеголовки
SS-N-20 M1/M2 Sturgeon; PCM-52	1983	8 300	2 550	500	10 x 0.200
SS-N-23 Skiff; PCM-54	1986	9 000	2 800	500	4 x 0.100
<b>Подводные лодки</b>					
Проект 667БДР "Кальмар" (Delta-III)	1976				16 x SS-N-18
Проект 667БДРМ "Дельфин" (Delta-IV)	1986				16 x SS-N-23
Проект 941 "Акула" (Typhoon)	1981				20 x SS-N-20
<b>Стратегические бомбардировщики</b>					
Ту-95МС-6	1983	10 500 км	20 т (макс. до 25 т)		6+4 x X-55
Ту-95МС-16	1983	10 500 км	20 т (макс. до 25 т)		6+10 x X-55
Ту-160 Blackjack	1987	14 000 км	22.5 т (макс. до 40 т)		2 x 6 x X-55/X-55М, 2 x 12 x X-15

Система доставки	Год принятия на вооружение	Радиус действия (км)	Полезная нагрузка (кг)	КВО	Боеголовки
<b>Межконтинентальные баллистические ракеты</b>					
SS-18 M4/M5/M6 Satan; РС-20, Р-36Н Воевода	1979	11 000	8 800	250	10 x 0.550/0.750; 1 x 25 Мт
SS-19 M3 Stiletto; РС-18, УР-100НУ	1979	9 000	4 350	300	6 x 0.750
SS-24 M1/M2 Scalpel; РС-22, РТ-23У Молодец	1987	10 000	4 050	200	10 x 0.550
SS-25 Sickie; РС-12М, Тополь	1985	10 500	1 000	200	1 x 0.550
SS-27 Sickie; РС-12М2 Тополь-М	1985	10 500	1 000	200	1 x 0.550
<b>Баллистические ракеты подводных лодок</b>					
SS-N-18 M1 Stingray; PCM-50	1978	6 500	1 650	400	3 x 0.500
SS-N-20 M1/M2 Sturgeon; PCM-52	1983	8 300	2 550	500	10 x 0.200
SS-N-23 Skiff; PCM-54	1986	9 000	2 800	500	4 x 0.100
<b>Подводные лодки</b>					
Проект 667БДР "Кальмар" (Delta-III)	1976				16 x SS-N-18
Проект 667БДРМ "Дельфин" (Delta-IV)	1986				16 x SS-N-23
Проект 941 "Акула" (Typhoon)	1981				20 x SS-N-20
<b>Стратегические бомбардировщики</b>					
Ту-95МС-6	1983	10 500 км	20 т (макс. до 25 т)		6+4 x X-55
Ту-95МС-16	1983	10 500 км	20 т (макс. до 25 т)		6+10 x X-55
Ту-160 Blackjack	1987	14 000 км	22.5 т (макс. до 40 т)		2 x 6 x X-55/X-55М, 2 x 12 x X-15

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԽԱՂԱՔԱՐՏ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1990-ականների սկզբներից ի վեր Ադրբեջանը միջազգային, այդ թվում՝ իսլամական շրջանակներում ձեռնամուխ եղավ ակտիվ քարոզչության՝ ձգտելով Ղարաբաղյան հարցը լուծել հոգուտ Ադրբեջանի: Ի թիվս այլ կռիվանների՝ իսլամական համերաշխության գաղափարը կարող էր լավագույնս օգտագործվել իսլամական պետությունների աջակցությունը ձեռք բերելու համար: Մահմեդական շրջանակներում դեռևս կշիռ չունեցող հետխորհրդային Ադրբեջանը, անկախություն ձեռք բերելուց ի վեր, ձգտում էր ընդգծել իր պատկանելությունն իսլամական աշխարհին: Դեռևս 1992թ. Շրի Լանկայում Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեն հայտարարեց, որ ադրբեջանական ժողովրդի նկատմամբ անտարբերությունը հավասար է իսլամական համերաշխության պատվիրանների մոռացությանը:

Ադրբեջանի ջանքերը, անշուշտ՝ ոչ առանց Թուրքիայի աջակցության, տվեցին իրենց որոշակի արդյունքները: 1992-ից ի վեր իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ), Հայաստանին սկսեց դատապարտել իբրև «ագրեսոր», Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունեցող և Ադրբեջանի մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող մի երկիր: Մեկ անգամ չէ, որ Իսլամական կոնֆերանսը կոչ է արել մահմեդական պետություններին և միջազգային հանրությանը՝ «օգտագործել քաղաքական և տնտեսական ազդեցիկ միջոցներ՝ վերջ դնելու հայկական ագրեսիային և ադրբեջանական տարածքների բռնազավթմանը», «զերծ մնալ Հայաստանին զինված ուժեր և սպառազինություններ տրամադրելուց», իսկ «գրավյալ» տարածքներում ադրբեջանցի ազգաբնակչության դեմ գործողությունները որակվել են իբրև «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»: Բանաձևեր, որոնց օգտին քվեարկում են անգամ Հայաստանի հետ բարեկամական հարաբերություններ ունեցող իսլամական պետությունները: Իսլամական աշխարհում Հայաստանի նկատմամբ ձևավորվել են արմատական տրամադրություններ: Նման մտայնություն ունեցող պետությունները (Թուրքիա, Սաուդյան Արաբիա, Պակիստան, Բանգլադեշ) Հայաստանի հետ դիվանագիտական կապերի հաստատումը պայմանավորում են Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ:

### *Իսլամական կոնֆերանս կազմակերպության Բաքվի համաժողովները*

Չնայած Ադրբեջանն, իր իսկ սահմանադրության համաձայն, աշխարհիկ պետություն է, երկրի իշխանությունները սեփական դիրքերն ամրապնդելու նպատակով օգտագործում են իսլամական գործոնը թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ: Քաղաքական գործիչները՝ իշխանական, թե՛ ընդդիմադիր, շատ դեպքերում դիմում են իսլամական հռետորականությանը:

Արտաքին քաղաքականության մեջ իսլամական ուղղությունը Ի.Ալիևի իշխանության օրոք պահպանեց առաջնայնությունը: Ադրբեջանն այսօր ակտիվորեն համագործակցում է իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի հետ և համարվում է նրա ակտիվ անդամներից մեկը:

2006թ. Ադրբեջանում տեղի ունեցան ԻԿԿ երկու կարևոր հանդիպումներ: Առաջինը հունիսի 19-21-ը արտաքին գործերի նախարարների XIII կոնֆերանսն էր, որի արդյունքում ստորագրվեցին եզրափակիչ փաստաթուղթը (որի 45 և 46-րդ կետերը վերաբերում են Հայաստանին), մյուսը Բաքվի հռչակագիրն է (տե՛ս *Հավելված 3*): Երկու փաստաթղթերում էլ Հայաստանն անվանված է «ագրեսոր»:

1993-ից ի վեր Իսլամական կոնֆերանսը հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման որևէ ծրագիր առաջ չի քաշել կամ որևէ կառուցողական քայլ չի արել: Հակամար-



տության խաղաղ կարգավորման պարագայում՝ որպես զիջումներ անող միակ կողմ դիտարկվում է Հայաստանը, որն անհապաղ պետք է դուրս գա բոլոր «գրավյալ» տարածքներից, իսկ Լեռնային Ղարաբաղը երբևէ չի հիշատակվել որպես հակամարտող կողմ (նրա իշխանությունները համարվում են «ոչ լեգիտիմ» և «հանցագործ»)։ Խորամուխ չլինելով հարցի էության մեջ՝ անդամ երկրները քվեարկում են Ադրբեջանի և նրա համախոհ երկրների կազմած նախագծերի օգտին՝ առանց հաշվի առնելու, թե որքանով են դրանք նպաստում Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմանը։ ԻԿԿ-ն հարցի մասին ողջ տեղեկատվությունը ստանում է միակողմանի աղբյուրից՝ տվյալ դեպքում Ադրբեջանից։

Ուշագրավ է, որ Բաքվի կոնֆերանսի օրերին Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովը տարածեց ապատեղեկատվություն այն մասին, որ իսլամական պետությունները խզելու են իրենց հարաբերությունները Հայաստանի հետ։ Մինչդեռ Հայաստանը բարեկամական հարաբերություններ ունի և համագործակցում է իսլամական մի շարք երկրների հետ։

Մոտ երեք ամիս անց, սեպտեմբերի 9-12-ը, Բաքվում տեղի ունեցավ իսլամական պետությունների տուրիզմի նախարարների V կոնֆերանսը, որի բացմանը հանդես եկավ նախագահ Ի.Ալիևը։ Նրա ելույթը նվիրված էր իսլամական միասնության և իսլամական աշխարհին սպառնացող մարտահրավերներին միասնաբար հակազդելու անհրաժեշտությանը։ Այս համատեքստում Ալիևը իսլամական աշխարհի ուշադրությունը մեկ անգամ ևս սևեռեց Ղարաբաղյան խնդրի վրա։

Որքան էլ տարօրինակ է, իսլամական երկրների միջև տուրիզմի և բարեկամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, դատապարտվեցին Ադրբեջանի դեմ հայկական կողմի գործողությունները։ Իսկ ադրբեջանական աղբյուրները հանդիպման մասին խոսելիս առաջին հերթին ընդգծում էին ոչ թե տուրիզմի ոլորտում իսլամական երկրների ձեռքբերումները, այլ Ղարաբաղյան հարցը։ Բաքվի հոչակագրի մի շարք դրույթներ վերաբերում են Ադրբեջանի դեմ Հայաստանի «ագրեսիային», այդ թվում՝ «գրավյալ տարածքներում» իրականացված հրդեհներին՝ կրկնելով հունիսին արտգործնախարարների կոնֆերանսում ընդունված բանաձևի դրույթները։

Հատկանշական է, որ միջազգային թերևս առաջին կառույցը, որն անմիջապես արձագանքեց «գրավյալ տարածքներում» սկսված հրդեհներին, Իսլամական կոնֆերանսն էր։ Սեպտեմբերի 11-ին Բաքվում նախագահ Ի.Ալիևի հետ հանդիպման ժամանակ ԻԿԿ գլխավոր քարտուղար Էքմեյեդդին Բիսանօղլուն վերջինիս տեղեկացրեց, որ հրդեհների վերաբերյալ ՄԱԿ բանաձևի ընդունման հարցում ԻԿԿ-ն ոչ պակաս դերակատարություն է ունեցել, իսկ ինքն անձամբ է այդ մասին Քոֆի Անանին նամակ ուղարկել։ Նշենք, որ 2004թ. կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրված Թուրքիայի ներկայացուցիչ և իսլամական աշխարհում մեծ համարում ունեցող Է.Բիսանօղլուն մեծապես աջակցում է միջազգային շրջանակներում ադրբեջանական PR-ին։

### ***Ադրբեջանը ԻԿԿ նախաձեռնություններում***

2006թ. սեպտեմբերի 3-ին Ստամբուլում պաշտոնապես բացվեց Երկխոսության և համագործակցության Իսլամական կոնֆերանսի երիտասարդական ֆորումի գրասենյակը, որն, ի դեպ, ստեղծվել է Ադրբեջանի երիտասարդական կազմակերպությունների ազգային ասամբլեայի առաջարկով և ծրագրով։ Ֆորումի հիմնադիր համագումարը տեղի էր ունեցել 2003թ. օգոստոսին Բաքվում։ Ի դեպ, ֆորումի առաջին նախաձեռնություններից մեկն ադրբեջանական քարոզչության ոգով գրված «Ղարաբաղ. փաստեր և հետևանքներ» գիրքն է՝ ԻԿԿ նոր նախագծի՝ «Հակամարտություններ և հումանիտար աղետներ ԻԿԿ երկրներում» շարքի առաջին հրատարակությունը, որը բաժանվեց հունիսին Բաքվում տեղի ունեցած իսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպման մասնակիցներին։ Ֆորումի գլխավոր քարտուղարը Ադրբեջանի ներկայացուցիչ Էլշադ Իսբանդերովն է։

Նշենք, որ Ադրբեջանն առաջարկել է 2007թ. Բաքվում անցկացնել «Զանգվածային լրատվամիջոցների դերը հանդուրժողականության և փոխհամաձայնության հարցում» խորագրով ԻԿԿ կոնֆերանսը, ինչին արդեն հավանություն է տրվել:

### ***Իսլամական գործոնը՝ հոգուտ Ադրբեջանի***

Ադրբեջանցի վերլուծաբանների կարծիքով՝ Բաքուն ծրագրել է սերտորեն համագործակցել Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ բոլոր պետությունների հետ: Վերջին շրջանում Ադրբեջանը զգալի քայլեր է անում՝ բարելավելու հարաբերությունները նաև արաբական իսլամական աշխարհի հետ: Արաբական աշխարհում, որտեղ ավանդականորեն ամուր են Հայաստանի դիրքերը, Ադրբեջանը շատ «բացեր» ունի: Այս տեսանկյունից ուշագրավ է 2006թ. օգոստոսի վերջին Հորդանանի Աբդալլահ թագավորի առաջին պաշտոնական այցը Բաքու, որի ընթացքում ստորագրվեց միջկառավարական պայմանագիր:

Հիշեցնենք, որ Հորդանանը, ինչպես նաև Իսլամական կոնֆերանսի բազմաթիվ անդամ պետություններ 2002թ. ՄԱԿ ԳԱ 57-րդ նստաշրջանում քվեարկեցին հոգուտ «ՄԱԿ և ԵԱՀԿ համագործակցության մասին» որոշման մեջ փոփոխություն մտցնելու օգտին, ինչը դարաբաղյան հակամարտության կարգավորման դեպքում Ադրբեջանին ձեռնտու պայմաններ է ապահովում:

ԻԿԿ-ն դեմ է, որպեսզի Ղարաբաղյան հարցը դասվի «սառեցված հակամարտություններին» շարքին, կողմ է, որպեսզի խնդրի կարգավորման հարցը փոխանցվի ՄԱԿ:

Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը մշտապես ընդգծում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության աջակցությունն Ադրբեջանին, ինչը կօգնի միջազգային ասպարեզում իր երկրին հուզող հարցերն առաջ քաշելու համար<sup>1</sup>:

Այսպիսով՝

- Ադրբեջանը, որի հեղինակությունն իսլամական աշխարհում որոշակիորեն աճել է, ԻԿԿ շրջանակներում ձգտում է հասնել Հայաստանի դեմ քաղաքական և տնտեսական պատժամիջոցների կիրառմանը:

- Իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին առաջին հերթին արտահայտվում է ՄԱԿ-ում Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությանն առնչվող բանաձևերը հոգուտ Ադրբեջանի քվեարկելու հանգամանքով: Իսլամական աշխարհն այդպիսով ի ցույց է դնում իսլամական համերաշխության գաղափարի կենսունակությունը: ՄԱԿ-ում իսլամական պետությունների նման կեցվածքն առաջիկայում հազիվ թե փոփոխման ենթակա լինի:

- Միևնույն ժամանակ, Լեռնային Ղարաբաղի և «ադրբեջանական գրավյալ տարածքներին» հարցն իսլամական աշխարհում չունի այն հնչեղությունը, ինչպես շատ այլ հարցեր: Բաքվի հանդիպումները որևէ նոր բան չավելացրին Հայաստանի նկատմամբ որդեգրված դիրք-որոշման մեջ, այլ ի հայտ բերեցին գոյություն ունեցող իրողությունները:

- Հայաստանի արտաքին քաղաքականության ջանքերն իսլամական գործոնը չեզոքացնելու ուղղությամբ այնքան էլ արդյունավետ չեն: ՀՀ արտաքին գերատեսչությունը պետք է փորձի հնարավորինս հակազդել ադրբեջանական լոբբինգին:

- Վերջին շրջանում, կապված Միջին Արևելքում ընթացող գործընթացների հետ, միջազգային հարաբերություններում ակտիվացել է իսլամական գործոնի նշանակությունը, ինչը կարող է բարենպաստ պայմաններ ստեղծել Ադրբեջանի համար:

- Չի բացառվում, որ առաջիկայում տարածաշրջանում ընդլայնվող արևմտյան ազդեցությանը հակազդելու արդյունքում Ռուսաստանն իր արտաքին քաղաքականության մեջ առավել արժևորի իսլամական ուղղությունը՝ նոր պայմանավորվածություններ ձեռք բերելով Ադրբեջանի հետ: Այս իրողությունը դարաբաղյան հակամարտության մեջ կարող է խթանել իսլամական գործոնի նշանակությունը:

***Արաքս Փաշայան***  
***«Նորավանք» հիմնադրամ***

<sup>1</sup> Ի դեպ, ԻԿԿ շրջանակներում գործող առանձին կառույցներ, այդ թվում՝ Իսլամական զարգացման բանկը, Ադրբեջանին նաև որոշակի ֆինանսական օգնություններ և վարկեր են տրամադրում, փախստականների շրջանում իրականացնում բազմաթիվ ծրագրեր:

**Բաքվի հռչակագիրը**

*Հաստատված Իսլամական կոնֆերանսի արտաքին գործերի նախարարների 33-րդ նստաշրջանում Իրավունքների, ազատությունների և արդարության ներդաշնակությանը նվիրված նստաշրջան Հիջրայի 1427թ. 23-25 ջումադա ալ-ավալ (հունիսի 19-21), Բաքու, Ադրբեջան*

Մենք՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ երկրների արտաքին գործերի նախարարներս և պատվիրակությունների ղեկավարներս, մասնակցելով Իսլամական կոնֆերանսի արտաքին գործերի նախարարների 33-րդ նստաշրջանին (Իրավունքների, ազատությունների և արդարության ներդաշնակության նստաշրջան), որը տեղի ունեցավ Ադրբեջանի Հանրապետությունում, Բաքվում, Հիջրայի 1427թ. 23-25 ջումադա ալ-ավալին (2006թ. հունիսի 19-21), քննարկելով իսլամական ումմայի առջև դրված հիմնական խնդիրները, հայտարարում ենք հետևյալը.

1. Մենք կրկին հայտարարում ենք մեր հավատարմությունը Իսլամական կոնֆերանս կազմակերպության կանոնադրության նպատակներին, խնդիրներին և սկզբունքներին և կրկին հավաստում ենք մեր հավատարմությունը ԻԿԿ բարձրամակարդակ հանդիպումներում և նախարարների կոնֆերանսներում ընդունված բանաձևերի իրականացմանը:
2. Մենք կրկին հավաստում ենք մեր նվիրվածությունը խաղաղության, հումանիզմի և հանդուրժողության վեհ գաղափարներին՝ ի պատասխան 21-րդ դարում մարդկության առջև ծառայած խնդիրների: Իսլամին վերջին ժամանակներս սպառնացող մարտահրավերները մեզ հարկադրում են էլ ավելի համախմբվել մեզ միավորող արժեքների շուրջ և ամրապնդել համերաշխությունը:
3. Մենք աջակցում ենք տնտեսական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև ԻԿԿ անդամ երկրներում ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության դերի ամրապնդման ոլորտներում բարեփոխումները շարունակելուն և կարևոր նշանակություն ենք տալիս մշակութային, կրոնական ու ռասայական բազմազանության պաշտպանությանը: Այդ բազմազանությունը չպետք է հակամարտության աղբյուր հանդիսանա, այլ, ավելի շուտ, պետք է ծառայի փոխադարձ հարստացման նպատակներին և երկխոսություն առաջացնի կրոնների և քաղաքակրթությունների միջև:
Но при реставрации удинской церкви, построенной в 1823г., были стерты древние надписи на армянском языке, что вызвало резкий протест со стороны спонсоров реставрации – норвежцев, которые по этой причине прекратили финансирование работ. Посол Норвегии Стейнар Гиль в этой стране заявил о нарушении Азербайджаном международных конвенций об охране исторических памятников и о недопустимости подобного варварского отношения к культуре. Он в частности сказал: «Любой исторический памятник нужно сохранять, бережно относиться к нему, даже если он связан со сложной политической ситуацией. В ноябре прошлого года я был в этом селе, видел эти надписи. Было бы лучше, если бы они сохранились, для Азербайджана это был шанс показать всему миру пример бережного отношения к памятникам с надписью на вражеском языке».

**По сути дела, европейцами впервые была открыто осуждена политика Азербайджана на притеснение, уничтожение культуры и ассимиляцию аборигенных народов, являющихся сегодня национальными меньшинствами в этой стране.**

*Михаил Агаджанян*

## ПРОБЛЕМЫ АРМЯНО-ГРУЗИНСКИХ ОТНОШЕНИЙ И АНАЛИЗ СИТУАЦИИ В ДЖАВАХКЕ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

В последнее время в политической дискуссии как в Армении, так и в Грузии актуализируется проблема двусторонних межгосударственных отношений. Данные различных социологических опросов в обеих странах показывают, что общественность Армении и Грузии по-разному воспринимает перспективы политического взаимодействия двух стран. При этом многие оценивают их весьма негативно: если для армянской общественности главным негативом является опасение углубления грузино-турецких взаимоотношений, а также взаимоотношения Тбилиси с Баку, то для грузинского политического класса основным раздражителем является армяно-российское стратегическое партнерство.

Естественно, что важнейшим фактором при анализе взаимоотношений Грузии и Армении является проблемы Джавахка, равно как многочисленные вопросы, связанные с армянским населением в иных регионах Грузии, особенно в Тбилиси. Причем если для Тбилиси данные вопросы рассматриваются в основном в свете «сепаратистских и экстремистских» настроений армян Джавахка, «претензий» армян на церкви и культурные объекты в Грузии, то для многих в Армении все эти проблемы ограничиваются в основном только вопросами сохранения армянского этнического элемента в Джавахке, а также минимального обеспечения политических, языковых и религиозных прав армянского меньшинства Грузии. В таких условиях проблемы более детального рассмотрения и анализа перспектив армяно-грузинских отношений приобретают особую актуальность.

Сдержанный и реалистичный анализ всего спектра проблем, стоящих перед двумя странами, позволяет надеяться, несмотря на все вышеуказанные и иные проблемы и трудности, что армяно-грузинские отношения все еще имеют все предпосылки оставаться стабильно прочными и добрососедскими, а в перспективе – приобрести характер стратегического партнерства. Однако при этом не надо бояться озвучивать и пытаться решать те серьезные проблемы и возникающие трудности, которые стоят между двумя народами и государствами.

В этом плане следует упомянуть, что многовековая историческая общность армянского и грузинского народов действительно является прочной основой для тесных и добрососедских межгосударственных отношений Армении с Грузией, и это не просто слова или преувеличение. Большой положительный вклад армян в развитие грузинской государственности и культуры на протяжении столетий также может являться важным элементом, способствующим углублению отношения двух стран и народов, хотя история с так называемыми «спорными армянскими церквями» показывает, что это весьма деликатная и болезненная для грузинской общественности тема. Во многом это связано с той непропорционально большой ролью (причем законодательно закрепленной), которую играет в нынешней грузинской политической жизни Грузинская Православная Церковь. И не всегда особая роль ГПЦ в грузинской общественно-политической жизни играет стабилизирующую роль во взаимоотношениях Грузинской епархии Армянской Апостольской Церкви с грузинским государством или грузинской общественностью. Не секрет, что центральная грузинская власть давно бы могла решить вопрос принадлежности 6 «спорных армянских церквей» и вернуть их ААЦ, если бы не опасалась широкого негативного общественного резонанса и давления со стороны ГПЦ в своей стране.

С другой стороны, после восстановления независимости двух стран Грузия выступала и продолжает выступать важным коммуникационным и экономическим партнером Армении, и динамика сотрудничества в этой сфере стабильно развивается и углубляется, реализуются совместные инвестиционные проекты. Конечно, нельзя забывать и то, что ввиду многих

внутриполитических проблем в 1990-х гг. Грузия не была в состоянии полностью обеспечивать безопасность своих внутренних коммуникаций, а высокий уровень коррупции в этой стране превращал поездки армянских водителей по грузинским дорогам почти в сплошной кошмар. Однако следует также признать, что одним из немногих, но реальных достижений «Революции Роз» 2003г. стало решение именно этой «дорожной проблемы» и ситуация на дорогах Грузии с этого времени несравненно улучшилась. Вместе с тем, проблема коммуникационной значимости Грузии для Армении не должна быть самоцелью или своеобразным ограничителем, который препятствовал бы активному инициированию со стороны армянского правительства и армянской общественности необходимости обсуждения с грузинскими коллегами на всех уровнях имеющихся в отношениях двух стран проблем и сложностей.

При этом важно учесть тот положительный момент, что в последние годы все четче проявляется общность политических подходов двух стран по проблемам европейской и евроатлантической интеграции, которые должны стать еще большим стимулом для углубления стратегического партнерства и добрососедства между Арменией и Грузией. Поэтому тесное армяно-грузинское сотрудничество в сфере внешней политики и безопасности в перспективе имеет большие возможности, что приведет к новой ситуации в системе региональной безопасности Южного Кавказа. Однако наряду с этим учет мнения Армении в сфере безопасности со стороны Тбилиси должен обязательно сопрягаться и с серьезной корректировкой его подходов по отношению к армянскому населению Джавахка и решению его политических и социально-экономических проблем, а также с поиском новых механизмов по обеспечению его физической безопасности после вывода российских войск с территории Грузии. В решении данной задачи Тбилиси и Ереван должны искать новых партнеров, которые могут выступать гарантом развития их политических отношений как элемента региональной стабильности и безопасности всего Южного Кавказа. Армения жизненно заинтересована в гарантиях личных, политических, социально-экономических, религиозных, культурно-образовательных и языковых прав всех граждан Грузии армянского происхождения – особенно населения Джавахка – с учетом имеющихся международных и европейских норм и стандартов, а также обязательств по защите национальных и религиозных меньшинств, добровольно взятых на себя Грузией при вступлении в ряд международных организаций. Армения оказывала и будет оказывать всемерное содействие Грузии в осуществлении социально-экономических и культурно-образовательных программ, развитии местного самоуправления в Джавахке, а также большей политической интеграции армян этого региона в общественно-политическую жизнь страны. Однако и со стороны властей Грузии должна проявляться аналогичная готовность к решению таких проблем.

К сожалению, это зачастую сводится со стороны официального Тбилиси лишь к чисто декларативным и декоративным мероприятиям. Не случайно, что власти Армении на самых высоких уровнях особо отмечают данную проблему. В частности, речь идет о заявлении премьер-министра А.Маргаряна, которое было сделано летом 2006 г. по результатам его встреч с руководством Грузии. За последнее время это стало одним из наиболее жестких заявлений армянского правительства по проблеме Джавахка, особенно с учетом того, что было адресовано именно официальному Тбилиси. И действительно, на фоне процессов вывода российской 62-й военной базы, которая имела определенное положительное влияние на социально-экономическую ситуацию в Джавахке, практически не заметно никаких реальных мер грузинского правительства по улучшению ситуации в этом регионе.

Ссылки официального Тбилиси на скорую реализацию в Самцхе-Джавахетии ряда проектов в рамках американской программы «Вызовы Тысячелетия» уже не воспринимаются ни армянскими властями, ни населением Джавахка достаточно убедительными для решения насущных проблем региона. Во-первых, данная американская программа (частичная реализация которой стала возможным во многом вследствие давления армянской общины США) реально начнет реализовываться в Джавахке лишь в начале 2007г., а во-вторых, имея целью практически только реабилитацию автомобильного сообщения региона с Тбилиси, не предусматривает



иных масштабных социальных проектов в Джавахке, которые дали бы быстрый эффект и способствовали улучшению положения местного населения в краткосрочной перспективе.

Для дальнейшего стабильного взаимодействия двух стран в сложившихся геополитических и экономических условиях необходим поиск нового формата отношений, который должен скорректировать подходы двух стран, которые по определенным аспектам не вполне совпадают. В перспективе важным стабилизирующим элементом двустороннего сотрудничества Армении и Грузии могут стать процессы их европейской интеграции, особенно в рамках новой программы ЕС «Политика европейского соседства». Однако наиболее реальным стабилизирующим фактором для перспектив двустороннего сотрудничества станет более предметное и детальное нахождение решений по самой острой политической проблеме, существующей в отношениях Армении и Грузии – улучшению ситуации в Джавахке и защите в полном объеме прав армянского населения Грузии и его интеграции в общественно-политическую жизнь этой страны.

После ряда конфликтных инцидентов и событий в Джавахке в течение 2005г., в основном связанных с процессами вокруг вывода российских военных баз из Грузии, с начала 2006г. ситуация в этом регионе Джавахке оставалась относительно стабильной. Наиболее крупным и опасным инцидентом явились события, связанные с убийством 9 марта армянского юноши Г.Геворкяна (и ранением еще двух) в прилегающем к северу к Джавахку армянонаселенном Цалкском районе Грузии. Как известно, в этом районе грузинские власти с середины 1990-х гг. проводят активную политику по изменению демографической картины и заселению его этническими грузинами, сванами и аджарцами. Это приводит к многочисленным инцидентам на этнической и бытовой почве между грузинскими переселенцами и коренным армяно-греческим населением Цалкского района. Упомянутое убийство, которое, по мнению представителей армянских общественно-политических движений, имело ярко выраженный этнический оттенок, повлекло целый ряд митингов и акций протеста в Ахалкалаки со стороны армянского населения Джавахка.

В настоящее время развитие общественно-политических процессов в регионе Джавахка (как и во всей Грузии) проходит под влиянием намеченных на 5 октября 2006г. выборов в органы местного самоуправления. Как известно, ранее говорилось, что выборы пройдут не ранее декабря нынешнего года, однако довольно неожиданно для политической элиты и общественности Грузии власти назначили эти выборы намного раньше. Считается, это было сделано для того, чтобы оппозиция не смогла бы подготовиться к выборам, что дает преимущество правящей партии, учитывая значительно снизившийся рейтинг М.Саакашвили и правящего «Национального движения». Армянские общественно-политические движения Джавахка также оказались неготовыми к такому развитию событий, что усложнялось тем, что согласно действующему грузинскому законодательству, они не могут быть зарегистрированы в качестве политической партии, которая может участвовать в выборах. Тем не менее несомненно, что представители ведущих армянских общественно-политических движений Джавахка примут участие в выборах или в индивидуальном порядке, или же (согласно установившейся политической практике) могут быть зарегистрированы в качестве представителей общегрузинских политических партий – как проправительственных, так и оппозиционных.

В целом, в последнее время несколько изменилась общественно-политическая ситуация внутри региона и взаимоотношения между действующими политическими организациями. Значительно нивелировался фактор «клановости» как фактор внутривнутриполитической борьбы в Джавахке, несколько ослабили позиции и влияние традиционных организаций, которые пользовались поддержкой некоторых политических сил Армении и диаспоры. Это связано с тем, что некоторые из них (как, например, партия «Вирк»), будучи связаны с российской базой, по мере процессов ее вывода значительно потеряли свое влияние и ресурсы, что отчетливо проявилось в ходе неудачных акций протеста против начала вывода вооружений и военной техники с 62-й российской военной базы в конце апреля – начале мая 2006г. Что касается Совета общественно-политических движений Самцхе-Джавихка (поддерживаемого определенными политическими

силами внутри Армении и в диаспоре), то некоторое снижение влияния этой организации в последние месяцы можно объяснить начавшимися кадровыми изменениями и ее структурной реорганизацией. Определенное влияние в последние месяцы получили движение «Единый Джавахк» и молодежная организация «ДЖЕММ», усилиями которых во многом активизировалась культурная жизнь региона, проводится работа с молодежью Джавахка и т.д. «ДЖЕММ» явился наиболее активной политической силой, организовавшей массовые акции протеста после убийства армянского юноши в Цалке в марте 2006г. Данная организация также пользуется поддержкой некоторых политических и благотворительных организаций Армении и диаспоры. В целом можно отметить, что в последнее время наблюдается активизация деятельности ряда армянских благотворительных организаций из диаспоры, а также армянской церкви, что положительно отражается на развитии социально-экономической, культурной и образовательной жизни региона.

Некоторые эксперты и представители армянских общественно-политических движений высказывают опасение тем, что относительная стабилизация и снижение конфликтогенного потенциала в Джавахке вызваны лишь желанием грузинского руководства выиграть время и не провоцировать события вплоть до полного вывода 62-й российской военной базы из Ахалкалаки к концу 2007г. После этого, по их мнению, можно ожидать нового витка давления и активизации политических процессов со стороны грузинских властей. При этом процесс вывода российской базы из Ахалкалаки продолжается согласно графику. *Однако вызывает опасения информация, что, возможно, определенная часть выводимой через Азербайджан военной техники и вооружения официально передается российскими военными азербайджанской стороне. В частности, согласно некоторой информации, с 62-й базы Азербайджану было официально передано 8 танков Т-72, якобы за счет оплаты за транзит, а также другое вооружение и военное имущество. Согласно неофициальным сведениям работников российской базы, имели факты неоднократной «пропажи» целых вагонов с имуществом базы на территории Азербайджана.*

В то же время, несмотря на выполняемый график вывода военной техники и вооружения, по мнению некоторых офицеров 62-й РВБ, количество имеющегося на базе вооружения и военного имущества таково, что завершить полный вывод базы в намеченные сроки не удастся. Однако данная информация не афишируется, и весьма сложно говорить о ее достоверности. Как бы то ни было, к концу 2007г., когда встанет вопрос о полном закрытии российской базы, можно ожидать активизации и даже обострения политических процессов в Джавахке, которые могут серьезно отразиться на дальнейшем развитии армяно-грузинских отношений и региональной безопасности.

*Сергей Минасян*

## ՎՐԱՍՏԱՆ. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վրաց-հարավօսական ու վրաց-աբխազական հակամարտությունների գոտիներում վերջին սրացումները, ինչպես նաև Վրաստանի ներքաղաքական դաշտում լարվածության կարծես անսպասելի աճը վկայում են, որ առաջիկա ժամանակահատվածում վրացական ուղղությունը նոր նշանակություն է ձեռք բերելու Հայաստանի ազգային անվտանգության համար:

### *Արտաքին գարգացումներ*

Ներկայումս Վրաստանի կողմից վարվող արտաքին քաղականությունն աննախադեպ կարևորություն է ստանում ողջ Հարավային Կովկասի համար: Նման հետևության հիմք են ծառայում առնվազն երկու հանգամանքներ.

- Մեծ է հավանականությունը, որ միջնաժամկետ հեռանկարում (մինչև 2010-2012թթ.) Վրաստանն անդամակցի Հյուսիսատլանտյան դաշինքին, ինչը էապես կփոխի ոչ միայն հարավկովկասյան աշխարհաքաղաքական փոխդասավորվածությունը, այլև տարածաշրջանային աշխարհաքաղաքական շարժերի տրամաբանությունը:
- Պաշտոնական Թբիլիսիի քայլերը, ինչպես նաև այդ երկրին միտված ԱՄՆ, Ռուսաստանի, Եվրամիության, Թուրքիայի ու Իրանի քաղաքականություններն իրենց կարևորությամբ Հարավային Կովկասում ձեռք են բերել առաջնային նշանակություն՝ հայադրբեջանական հակամարտությունում պահպանվող իրադրության համատեքստում:

Նախորդ երեք-չորս ամիսների ընթացքում Վրաստանը հայտնվեց միջազգային նոր իրավիճակում: Հուլիսին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի բացումն ու ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության մասին պաշտոնական Վաշինգտոնի որոշման հրապարակումը, իսկ սեպտեմբերին Վրաստանից ռուսական ռազմական տեխնիկայի դուրսբերման ավարտը իրավիճակի կարևորագույն բնութագրիչներն են: Նման իրողությունները մեծացրին Վրաստանի ընդհանուր նշանակությունը հարավկովկասյան գործընթացներում:

Հետևաբար, նշված հանգամանքների ֆոնին ծավալվող ռուս-վրացական հակամարտությունը և ամերիկա-վրացական դիվանագիտական ակտիվությունը պետք է դիտարկել նոր տրամաբանության համատեքստում:

Ռուս-վրացական հարաբերությունները դուրս են եկել երկկողմանի ձևաչափից և կրում են տարածաշրջանային աշխարհաքաղաքականության տարրեր: Եթե Շևարդնաձեի օրոք ու Սահակաշվիլու նախագահության սկզբնական ժամանակաշրջանում Թբիլիսիի ու Մոսկվայի միջև ծավալվող լարվածությունն ավելի շատ միտված էր Վրաստանում ռուսական ազդեցության սահմանափակմանը, ապա 2006թ. աշնանից ռուս-վրացական հակամարտությունն առաջին հերթին ունի տարածաշրջանային իմաստ:

Վրացական ղեկավարության որոշումը՝ աբխազական ու հարավօսական ուղղություններով ճնշում գործադրել Ռուսաստանի նկատմամբ, ներքաղաքական հաշվարկներից գատ հետապնդում է նաև փոխկապակցված մի քանի արտաքին նպատակներ:

Վրացական ռազմական հետախուզության տվյալների համաձայն, Աբխազիայում և Հարավային Օսիայում Ռուսաստանը պահում է, համապատասխանաբար, 1.300-ոց և 500-ոց զորախմբեր: Դժվար չէ կռահել, որ հավանական ռազմական գործողությունների ժամանակ այդ զորախմբերը լուրջ խոչընդոտ են հանդիսանալու վրացական բանակի համար: Տարածաշրջանային երկրների ռազմական բալանսը ներկայացված է *Հավելված 4*-ում:

Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ մինչև նոյեմբերի վերջ Ռիգայում կայանալիք ՆԱՏՕ հերթական զագաթաժողովը ռուսական զորքերի հեռացումը Աբխազիայից ու Հարավային Օսիայից կամ լուրջ տեղաշարժն այդ հարցում զգալի աջակցություն կլինի Հյուսիսատ-

լանտյան դաշինքին անդամակցելու Թբիլիսիի ծրագրերին (նույնիսկ աբխազական ու հարավօսական չլուծված հակամարտությունների պայմաններում):

Մակայն Թբիլիսիի ընդհանրական նպատակն է Հարավային Կովկասում Ռուսաստանի ներկայության կրճատումը: Աբխազիայից ու Հարավային Օսիայից ռուս խաղաղապահների հեռացումը կամ այդ գոտիներում խաղաղապահ առաքելությունների ձևաչափի փոփոխությունը իրականում կնշանակի տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության նվազում:

Հաշվի առնելով վերջին հետևությունը՝ պարզ է դառնում, որ Սահակաշվիլու վարչակազմի գործողությունների հիմքում չեն կարող ընկած լինել սոսկ վրացական հաշվարկներ: Հուլիս-օգոստոս ամիսներին Թբիլիսիում էին Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության մեջ ոչ երկրորդական համարվող ԱՄՆ Մենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռիչարդ Լուգարը, պակաս ազդեցություն չունեցող սենատոր Ջոն ՄըքՔեյնը<sup>1</sup> և Քոնդոլիզա Ռայսի Եվրոպայի ու Եվրասիայի հարցերով փոխօգնական Մեթյու Բրայզան<sup>2</sup>, իսկ Վրաստանի դիրքորոշումը Աբխազիայից ու Հարավային Օսիայից ռուսական զորքերի դուրսբերման հարցում միայն կոշտացավ<sup>3</sup>՝ տրամաբանական ավարտի հասնելով սեպտեմբերի 22-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 61-րդ նստաշրջանում Միխայիլ Սահակաշվիլու ելույթով<sup>4</sup>:

Նույն տրամաբանության մեջ է հարկավոր դիտարկել հուլիսի 24-27-ը Կողորի կիրճում սվանական առաջնորդ Էմգար Կվիցիանիի դեմ վրացական ուժային գերատեսչությունների ձեռնարկած գործողության արդյունքները<sup>5</sup> և հարավօսական ուղղությամբ լարվածության շարունակական աճը:

Նոր իրավիճակի հաջորդ կարևոր հատկանիշն է Ռուսաստանի վրացական քաղաքականության փոփոխությունը: Անցած մոտ կես տարում այդ քաղաքականությունը կոշտ դրսևորումներ ստացավ, ինչը ներկայում, թերևս, գտնվում է իր բարձրակետին: Մարտից ռուսական շուկա արտահանվող վրացական հիմնական ապրանքների մուտքի արգելափակումը, աբխազական ու հարավօսական կողմերի ինքնորոշվելու հիմնարարության մասին ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների աննախադեպ հայտարարությունները, հունիսի 14-ին Աբխազիայի, Մերձդնեստրի ու Հարավային Օսիայի մասնակցությամբ փաստացի ռազմաքաղաքական դաշինքի ի հայտ գալը, Վրաստանի երկու նախկին ինքնավարություններում առկա ռուսական զորախմբերի ուժեղացումը, «Վերին Լարս» անցակետի փակումը և Վրաստանի ներքին զարգացումների նկատմամբ ռուսական տեղեկատվական մոտեցման զգալի կոշտացումն այդ քաղաքականության արտահայտիչներն են:

### ***Ներքին զարգացումներ***

Նշված զարգացումների համատեքստում նոր իմաստ են ստանում Վրաստանի ներքին գործընթացները: Սահակաշվիլու վարչակազմի տեսանկյունից այժմ էական է ներքին աջակցության ընդլայնումը: Ընդ որում՝ առաջնային նպատակն ավելի շատ արտաքին քաղաքականության մեջ լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերումն է, քան ներքաղաքական ազդեցության ընդլայնումը:

Պատահական չէ, որ դեռևս հուլիսի 18-ին Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունված բանաձևին (Աբխազիայից ու Հարավային Օսիայից ռուսական խաղաղապահների դուրս-

<sup>1</sup> Որոշ տեղեկությունների համաձայն՝ 2008թ. ԱՄՆ-ում կայանալիք նախագահական ընտրություններին ՄըքՔեյնը կարող է ներկայացնել այդ երկրի Հանրապետական կուսակցությունը:

<sup>2</sup> Նշենք, որ Բրայզան մայիսին ու հունիսին ևս այցելել էր Թբիլիսի:

<sup>3</sup> Օրինակ, օգոստոսի 22-ին գտնվելով Թբիլիսիում՝ սենատոր Լուգարը հայտարարեց, թե պաշտոնական Վաշինգտոնը սատարում է վրացական կառավարությանը՝ Աբխազիայից ու Հարավային Օսիայից ռուսական զորքերի դուրսբերման հարցում:

<sup>4</sup> Այդ ելույթի ժամանակ Սահակաշվիլին ներկայացրեց աբխազական ու հարավօսական հակամարտությունների լուծման պաշտոնական Թբիլիսիի մոտեցումները՝ ռուս խաղաղապահների հեռացում, ՄԱԿ, ԵՄ և ԵԱՀԿ միջնորդությամբ Աբխազիայի ու Հարավային Օսիայի ապառազականացում և վերջապես հաշտարար բանակցություններ:

<sup>5</sup> Ռուսական աղբյուրների մատուցմամբ՝ Կվիցիանիի դեմ ձեռնարկված գործողությունների արդյունքում Վրաստանը Աբխազիայի տարածքում գտնվող Կողորի կիրճում օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում արդեն իսկ տեղակայել է մոտ 2.500 զինվոր: Կիրճում ակտիվ կերպով ընթանում է վրացական ռազմական ենթակառուցվածքների ձևավորում:

բերման մասին) Սահակաշվիլու աշխատակազմի ջանքերի շնորհիվ կողմ քվեարկեցին նիստին ներկա բոլոր 144 պատգամավորները<sup>1</sup>:

Այդ տրամաբանությունից են բխում նաև ի սկզբանե դեկտեմբերին նախատեսված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները (ՏԻՄ) Սահակաշվիլու օգոստոսի 26-ի հրամանագրով հոկտեմբերի 5 տեղափոխելը<sup>2</sup>: Այստեղ հարկավոր է առանձնացնել երեք գործոն.

- Նոյեմբերի 27-29-ը Ռիգայում կայանալիք ՆԱՏՕ գագաթաժողովին ընդառաջ Աբխազիայից ու Հարավային Օսիայից ռուսական խաղաղապահների դուրսբերման հարցով Մոսկվայի հետ տարվող բանակցություններում Սահակաշվիլուն հարկավոր է մեծացնել ներքաղաքական աջակցությունն ու ազդեցությունը:
- Կողորի կիրճում վրացական ուժայինների հաջող գործողությունները նպաստեցին Սահակաշվիլու վարչակազմի հեղինակության աճին, ինչը, ըստ ամենայնի, կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ արդեն հոկտեմբերի սկիզբ տեղափոխված ՏԻՄ ընտրությունների արդյունքների վրա:
- 2006թ. հոկտեմբերի 5-ի ՏԻՄ ընտրությունները Սահակաշվիլու իշխանության գլուխ անցնելուց հետո առաջին համապետական ընտրություններն են Վրաստանում, և նրանց թափանցիկությունն ու արդյունքները, ամեն դեպքում, դիտարկվելու են որպես իշխող ուժի ներքին ու արտաքին ռազմավարությունների ազդեցիկ գնահատական:

Վրացական ու արևմտյան աղբյուրները հակված են մեկ ընդհանուր գիծ տեսնել այս մարտին Թբիլիսիի բանտերից մեկում բռնկված կալանավորների ապստամբության, հուլիսին ու օգոստոսին Կողորի կիրճում Վրաստանի նախկին նախագահի ներկայացուցիչ Էմզար Կվիցիանիի գործողությունների, Վրաստանի ազգային անվտանգության նախկին նախարար Իգոր Գեորգաձեին հարող հասարակական-քաղաքական կառույցների կողմից (ըստ վրացական անվտանգության մարմինների) Վրաստանում պետական հեղաշրջում իրականացնելու չհաջողված փորձի և, ընդհանուր առմամբ, Ջավախքում ու Վրաստանի Մառնեուլի շրջանում ժամանակ առ ժամանակ ծագող հայկական և ադրբեջանական հուզումների միջև:

### *Հետևություններ*

Ստեղծված իրավիճակում առանցքային է նոյեմբերի վերջին Ռիգայում կայանալիք ՆԱՏՕ գագաթաժողովը: Դրան են միտված ինչպես վրացական (աբխազական ու հարավօսական ուղղություններով ճնշումը Ռուսաստանի վրա, ՏԻՄ ընտրություններում իշխող ուժի հաղթանակի ապահովման նախապատրաստությունը), այնպես էլ ռուսական կողմի քայլերը (օրինակ, նոյեմբերի 12-ին Հարավային Օսիայում կայանալիք անկախության հանրաքվեն ու նախագահական ընտրությունները):

Հաշվի առնելով իրադրության դերակատարների (Ռուսաստան, ԱՄՆ, Վրաստան, Աբխազիա, Հարավային Օսիա) մոտեցումների տրամաբանությունը՝ գոյություն ունեցող լարվածությունն առաջիկայում միայն կաճի:

Հուլիս-օգոստոս ամիսներին Կողորի կիրճում վրացական զորախմբի հաստատվելը վրաց-աբխազական ու վրաց-հարավօսական հակամարտություններում առաջ բերեց առանցքային երկու փոփոխություն.

- վրաց-աբխազական հակամարտության համար այն նշանակեց 1992-ից առկա իրավիճակի փոփոխություն,
- ընդհանուր առմամբ, այդ նոր իրավիճակը կարծես թե էական ազդեցություն թողեց երկու հակամարտություններում Թբիլիսիի կողմից ռազմական գործողություններ վերսկսելու համար անհրաժեշտ տեղեկատվական-հոգեբանական դաշտի ձևավորման վրա<sup>3</sup>:

<sup>1</sup> Վրաստանի խորհրդարանը բաղկացած է 220 պատգամավորներից:

<sup>2</sup> Դեռևս օգոստոսի 7-ին Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Գեորգի Արվելաձեի խոսքերով՝ ՏԻՄ ընտրությունները կայանալու էին դեկտեմբերի սկզբին:

<sup>3</sup> Այստեղ պետք է հաշվի առնել Վրաստանի ռազմական ծախսերի շեշտակի աճի փաստը: 2006թ. վրացական ռազմական բյուջեն հասավ մոտ \$220 մլն-ի (համեմատության համար նշենք, որ 2006թ. Հայաստանի ռազմական բյուջեն կազմում է մոտ \$169 մլն):

Նաև վերջին կետի հետ է առնչվում Սահակաշվիլու վարչակազմի նպատակը՝ լուրջ հաղթանակ տանել առաջիկա ՏԻՄ ընտրություններում: ՏԻՄ ընտրությունների տեղափոխումը դեկտեմբերից հոկտեմբեր և այդ ընտրություններում իշխող «Միացյալ ազգային շարժում» կուսակցության հաղթանակը, ըստ ամենայնի, Մ.Սահակաշվիլու վարչակազմի կողմից հետագայում կօգտագործվի որպես քարտ-բլանշ՝ այդ թվում հարավօսական ու արխազական հարցերում:

Մյուս կողմից՝ քիչ հավանական է, որ մինչև նոյեմբերի վերջ Ռիգայում կայանալիք ՆԱՏՕ գագաթաժողովը կողմերը դիմեն զինված գործողությունների: Թվում է, թե այդ ժամանակահատվածում նման զարգացումը ձեռնտու չէ կողմերից և ոչ մեկին:

Ուշադրություն է գրավում այն փաստը, որ վերջին երկու ամիսներին Վրաստանում պետական հեղաշրջման կազմակերպման կամ ծրագրված հեղաշրջմանն աջակցություն ցույց տալու մեղադրանքներ ներկայացվեցին այդ երկրի ազգային անվտանգության երկու նախկին նախարարների՝ Իրակլի Բաթիաշվիլուն («Առաջ Վրաստան» կուսակցության ղեկավար, ձերբակալվել է հուլիսին) և ներկայում Ռուսաստանում գտնվող, «Արդարություն» կուսակցության ղեկավար Իգոր Գեորգաձեին: Այդ հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ ժամանակին Սահակաշվիլու վարչակազմը ոչ միայն հատուկ մաքրագտումներ է անցկացրել վրացական անվտանգության մարմիններում՝ առանձին ուշադրություն դարձնելով այդ ոլորտին, այլև հիմք է տալիս ևս մեկ անգամ անդրադառնալ այն տեսակետին, թե հետխորհրդային երկրներում Ռուսաստանի քաղաքական ազդեցության ապահովման գործում որոշակի դեր ունեն հատկապես տեղի անվտանգության կառույցների ներկայացուցիչները:

Ընդհանուր առմամբ, ստեղծված իրավիճակը և սպասվող զարգացումները թույլ են տալիս Հայաստանի ազգային անվտանգության մասով ընդգծել հետևյալ կետերը.

- *Կարճատև հեռանկարում* Հայաստանի տնտեսական անվտանգության համար կարող է լուրջ հետևանքներ ունենալ լարվածության ու անկայունության շեշտակի աճը Վրաստանի շուրջ ընթացող զարգացումներում<sup>1</sup>:
- *Միջնաժամկետ հեռանկարում* Հայաստանի ազգային անվտանգության համար էական նշանակություն է ունենալու Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին. այդ պարագայում Հայաստանը կարող է գործնականում լուրջ դժվարություններ ունենալ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գծով իր հիմնական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ ցամաքային ու օդային հաղորդակցության հնարավորության հարցում՝ դրանից բխող աշխարհաքաղաքական հետևանքներով:

***Սարգիս Հարությունյան***  
***«Նորավանք» հիմնադրամ***

2005թ. Թբիլիսին նոր զենքերի ու զինտեխնիկայի ձեռքբերման համար ծախսել է \$146 մլն՝ մոտ 2.5 անգամ ավելի (այդ ցուցանիշով 2005թ. գրավել է առաջին տեղն աշխարհում), քան 2004թ.:

<sup>1</sup> Այդ տեսանկյունից բացասական արդյունքն արդեն իսկ առկա է՝ ռուսական «Վերին Լարս» անցակետի փակումը:

Ռազմական բալանսը Հարավային Կովկասում

Տվյալներ	Ադրբեջան	Հայաստան	ԼՂՀ	Վրաստան	Աբխազիա	Հարավային Օսիա
Ռազմական բյուջե	\$588 մլն (+ \$3.96 մլն ԱՌՕ <sup>1</sup> )	\$165 մլն (+ \$3.46 մլն ԱՌՕ)	Հստակ տվյալներ չկան	~\$218 մլն <sup>2</sup> (+ \$1.88 մլն ԱՌՕ)	Հստակ տվյալներ չկան	Հստակ տվյալներ չկան
Զինված ուժեր	66.740	48.160	~18.000 (15.000+)*	11.320	~5.000** (4.000+)	~2.000
Տանկ	220	110	70+ (45-50)	86	50+ (25-30)	~10
Զրահապատ մարտական մեքենա	468	140	100+ (~80)	91	80+ (~50)	~30 (~20)
Հրետանի	270	229	100+ (80+)	109	80+ (ոչ պակաս քան 60)	~25 (~15)
Ինքնաթիռ	47	16	-	7	-	-
Ուղղաթիռ	~35	~34	-	17	-	-
Ռազմանավ (պահակային և առափնյա + ականակիր)	11	-	-	~19 <sup>3</sup>	-	-
Երկկենցաղ ռազմանավ/Amphibious	5	-	-	4	-	-

\* Փակագծերում բերված վիճակագրությունը ներկայացված է ՋԼՄ-ում տեղ գտած տեղեկատվությունից ու հրապարակումներից:

\*\* The International Institute For Strategic Studies. «The Military balance-2006»-ի տվյալներով, Աբխազիայի զինված ուժերի ընդհանուր թվաքանակը հաշվվում էր +1.500:

Որպես հիմնական աղբյուր օգտագործվել են *The International Institute For Strategic Studies. «The Military balance-2006», The International Institute For Strategic Studies. «The Military Balance 2003/2004»* տրամադրած վիճակագրությունը և ՋԼՄ-ում տեղ գտած տեղեկատվությունն ու տարբեր հրապարակումներ:

<sup>1</sup> Արտաքին ռազմական օգնություն

<sup>2</sup> Հիմնված է [http://forum.runet.ru/?message\\_id=515490&forum\\_id=30](http://forum.runet.ru/?message_id=515490&forum_id=30) էլեկտրոնային աղբյուրի հաղորդած տեղեկատվության վրա, որն իր հերթին որպես հիմք ընդունել է երկրի ռազմական տեսչության տրամադրած ոչ պաշտոնական տվյալները:

<sup>3</sup> Վրաստանը չունի ականակիր/հակաականանետային տեսակի ռազմանավ:

## **ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ. ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ, ՀԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

Կարևորելով թիֆլիսահայ համայնքում<sup>1</sup> հայկականության պահպանման խիստ հրատապ խնդիրները՝ սույն թվականի ապրիլ-մայիսին «Նորավանք» ԳԿՀ-ն կազմակերպել և իրականացրել է դաշտային հետազոտություն: Անցկացվել են անհատական ֆոկլորային հարցազրույցներ Թբիլիսիում գործող հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և մի քանի հեղինակավոր հայ հասարակական գործիչների հետ: Ստորև ներկայացնում ենք այդ դաշտային նյութերի համառոտ վերլուծությունը:

### ***Թբիլիսիի հայկական միջավայրի որոշ առանձնահատկություններ***

Թիֆլիսահայ համայնքը հայկական Սփյուռքի ուրույն, հայության կյանքում պատմականորեն կարևոր դերակատարում ունեցող համայնքներից մեկն է:

Ներկայում անհանգստություն են առաջացնում համայնքի գոյության, անվտանգության, հայապահպանման խնդիրները, առավել ևս այնպիսի իրողության պայմաններում, երբ համայնքում բավական թույլ են արտահայտված ազգային ինքնապաշտպանական մեխանիզմները:

Սույն հետազոտությունում քննարկվում են Թբիլիսիի հայկական միջավայրում ներկայում ձևավորված հասարակական ակտիվության վեկտորները, ինչպես նաև փորձ է արվում գնահատելու տեղի հայության ազգային ներուժը հայկական հիմնախնդիրների համատեքստում:

Նկատելի է, որ վրացիների վերաբերմունքը հայության նկատմամբ ընդհանրապես, իսկ թիֆլիսահայության նկատմամբ մասնավորապես, մեծապես պայմանավորված է Ղարաբաղյան պատերազմում հայերի տարած հաղթանակով՝ մի կողմից, վրաց-աբխազական պատերազմում վրացիների կրած պարտությամբ՝ մյուս կողմից: Բացի պատմական անցյալից և կուլեկտիվ հիշողությունից, նշված երկու պատմական դեպքերն իրենց կնիքն են դրել այս փուլում ձևավորված հայ-վրացական հարաբերությունների վրա: Այն իր դրսևորումն է գտնում ոչ այնքան միջպետական՝ Հայաստան-Վրաստան հարաբերություններում, որքան Վրաստանի ներքին միջէթնիկ կյանքում:

Միաժամանակ կարևոր է այն, որ Ղարաբաղյան պատերազմում տարած հաղթանակը, կարծես թե, այնքան էլ մեծ ազդեցություն չի գործել թիֆլիսահայության (ըստ մեր դաշտային նյութի) էթնիկ վարքաբանության վրա: Հաղթող հայի կերպարը թիֆլիսահայ միջավայրում համեմատաբար թույլ է արտահայտված:

---

<sup>1</sup> Հայերը վաղուց ի վեր կազմել են Թիֆլիսի բնակչության զգալի հատվածը: Հայերի թիվը մասնավորապես աճեց արաբական տիրապետության տարիներին: Թուրք-սելջուկների ժամանակաշրջանում Դավիթ Շինարարի եռանդուն գործունեության շնորհիվ հզորացած Վրաստանում ապաստան գտան մեծ թվով հայեր: Վրաց թագավորը սիրով ընդունում էր հատկապես հայ առևտրականներին ու արհեստավորներին: Թագավորական արքունիքը նրանց բնակեցնում էր թագավորական տիրույթներում՝ խոշոր քաղաքներում, մասնավորապես՝ Թիֆլիսում, որպեսզի նպաստի հյուսիսային առևտրական մայրուղիների աշխուժացմանը և քաղաքային արհեստների զարգացմանը: Իրենց հերթին՝ վրաց հողատեր-կալվածատերերը շահագրգռված էին Թիֆլիսի արվարձաններում բնակեցնել հայ գյուղացի հողագործներին: Այդ մասին առավել մանրամասն տե՛ս *II. Мурадян, Армянская эпитафиа Грузии. Тбилиси, Ереван, 1988, էջ 8-11:*

Ներկայում Վրաստանում բնակվում է մոտ 250 հազ. հայ, ոչ պաշտոնական աղբյուրները նշում են 460 հազ. թիվը: Ինչպես և անցյալում, այսօր էլ հայերի զգալի մասը՝ մոտ 150 հազ. (տե՛ս «Հայ Սփյուռք» Հանրագիտարան, Հ.Սյվազյան, էջ 541), կենտրոնացած է Թբիլիսիում, որտեղ մի շարք թաղամասերում (Հավլաբար, Վազիսուբանի, Գլդանի, Վարկեթիլի և այլն) նրանք խիտ բնակություն են կազմում: Հայերի թիվը վերջին տարիներին նկատելիորեն նվազել է: Եթե 1989թ. մարդահամարով հայերը կազմում էին Վրաստանի բնակչության 8 %-ը, ապա 2002թ.՝ 5.7%-ը:



Այսպիսով, ստեղծված է մի իրավիճակ, երբ ներքին համայնական կյանքում տիտղոսակիր ժողովրդի և ազգային փոքրամասնության հարաբերություններում նկատվում է ոչ համարժեք փոխադարձ ընկալում: Մեր դիտարկումների համաձայն՝ վրացիների ընկալմամբ հայերը բավական ուժեղ ու կարող ազգ են, հետևաբար, իրենց կողմից հայկականության նկատմամբ մրցակցությունն արտահայտվում է առավել կազմակերպված, համակարգված է ու հետևողական: Փոխարենը Թբիլիսիի հայկական միջավայրում (ինչը չի կարելի ասել Ջավախքի մասին) մրցակցությանը ձգտելու, հաղթելու, տիրելու ցանկությունները թույլ են արտահայտված:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ այստեղ թույլ են արտահայտված նաև պատմականորեն համայնական կյանքով ապրող ժողովուրդներին բնորոշ (առաջին հերթին՝ հայերին) ինքնապաշտպանական մեխանիզմները (իմունիտետը):

Անշուշտ, Թբիլիսիի հայկական համայնքի այս առանձնահատկությունները պետք է փնտրել նախ պատմության էջերում, օրինակ՝ ոչ այնքան հեռու անցյալում (մոտ 100 տարի առաջ), երբ հայկական տարրն ակտիվ ներգրավված էր Թիֆլիսի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում:

Հայտնի է, որ Մփյուռքում ապրող հայությանն ընդհանուր առմամբ բնորոշ է վիրտուալ հոգեբանական կապը Հայրենիքի հետ՝ Հայրենիքի տեսիլքը, թաքուն փայփայած հավատն առ այն, որ մի օր լինելու է *վերադարձ դեպի Հայրենիք*: Թբիլիսիի հայության միջավայրում այս սպասումը չի նկատվում, քանի որ Թիֆլիսն իր տունն է: Ինչպես նշում են մեր գրուցակիցներից շատերը, *«մենք հյուր չենք այս տարածքում, ընդհակառակը, մենք միշտ եղել ենք, մենք ուրիշներին ընդունել»*:

Մյուս կողմից էլ, Թբիլիսին այնքան մոտ է Հայաստանին, որ թիֆլիսահայության համար անկախության այս տարիների ընթացքում դեռևս չի ձևավորվել արտերկրում ապրելու գիտակցությունը, մեր գրուցակցի խոսքերով՝ *«մեզ միշտ թվացել է, թե մենք ապրում ենք երկու սենյականոց բնակարանում, ոչ մի հայի մտքով չէր անցնում, որ տեղափոխվելով Երևանից Թիֆլիս՝ ինքը հայտնվել է այլ երկրում: Մեզ համար Վրաստանը Հայաստանի շարունակությունն է. ն՝ այնտեղ է Հայաստան, և՛ այստեղ, և՛ այնտեղ հայեր կան, և՛ այստեղ: Հիմա ամեն ինչ փոխվել է, բայց մենք դեռ չենք փոխվել»*:

Այսօր թիֆլիսահայը գտնվում է անմիջապես իր հայրենիքի հարևանությամբ գտնվող քրիստոնեական երկրում, որտեղ հայկական տարրի ներկայության մասին իրեն հիշեցնող բազում ապացույցներ կան: Հետևաբար, նա իրեն չի համարում սփյուռքում ապրող հայ, որն ինքնության պահպանման կարիք և անհրաժեշտություն ունի:

Այս առանձնահատկություններով է հիմնականում բացատրվում ինքնապաշտպանական ավանդական մեխանիզմների թույլ արտահայտվածությունը, որպես այդպիսին՝ կազմակերպված համայնքի բացակայությունը:

Ուժացման վտանգի թերագնահատումը հանգեցրել է նրան, որ այսօր մենք խոսում ենք արդեն հայ համայնքի աստիճանական անկման, նաև ոչ հեռու ապագայում հնարավոր կորստի մասին:

Այսօր թիֆլիսահայ համայնական կյանքի կազմակերպումը, կարելի է ասել, ընթանում է տարերայնորեն և չի դեկավարվում որևէ կենտրոնից՝ լինի համայնական կառույց, որևէ քաղաքական կուսակցություն (կամ կուսակցություններ), հասարակական կազմակերպություն, եկեղեցի, մշակութային տուն, թե այլ բան: Իրականում այստեղ գործում են հայկական մշակութային, կրթական, հոգևոր և այլ կառույցներ (հայ քաղաքական կուսակցություններ չեն գործում), բայց համայնական կյանքի կազմակերպման, այսպես ասած, «կենտրոնական իշխանություն» փաստացի չկա: Թիֆլիսի հայ համայնքի ակտիվ անդամների հիմնական մտահոգությունն այն է, որ համայնքը պառակտված է տարբեր խմբավորումների, անհատների, կազմակերպությունների միջև, խարխիլված են ներքին միասնությունն ու համախմբվածությունը:

Վերջին տարիներին վրացական ազգային ընտրանու կողմից տարվում է պետական սեկտորից, նաև երկրի սոցիալ-տնտեսական կյանքից այլազգիների (առաջին հերթին՝ հայերի) հետևողական դուրսմղման քաղաքականություն: Արդյունքում՝ ոչ պաշտոնական տվյալների համաձայն, պետական համակարգում հայերի թիվը 1-2 %-ից չի անցնում: Հայերն ունեն

5 պատգամավոր Վրաստանի Ազգային ժողովում, մեկ էներգետիկայի փոխնախարար, իսկ նախարարություններում և գերատեսչություններում հայերի գրեթե չենք հանդիպի: Վրացական կողմը նման իրավիճակը բացատրում է հայերի՝ իբր պետական լեզվի չիմացությամբ (Ջավախքի դեպքում միգուցե կարելի է նման պատճառաբանություն հրամցնել, թեպետ դա էլ առանձին քննարկման կարիք ունի), բայց Թբիլիսիի հայության մեծ մասը լեզվին տիրապետում է: Մեր գրուցակիցների կարծիքով՝ այս իրավիճակի հիմնական պատճառը հայկական ազգանուններն են: Դա վերաբերում է հիմնականում պետական սեկտորին: Ինչ վերաբերում է մասնավորին, ապա «այստեղ հայերին ընդունում են աշխատանքի, եթե համապատասխանում է մասնագիտական պահանջներին, բայց նույն աշխատանքի դիմաց հային վարձատրում են ավելի քիչ, քան վրացի մասնագետին», - նշում է մեր գրուցակիցը: Այսպիսով, Թբիլիսիում հայերի հասարակական դիրքերը վերջին տարիներին նկատելիորեն թուլացել են, ինչն ուղեկցվում է Վրաստանի մայրաքաղաքում հայերի ներկայության ոչ հեռանկարային լինելու մասին համատարած տրամադրություններով:

### *Պայրոց*

Հայության հասարակական դիրքերի թուլացմանը գուզնթաց, լուրջ խնդիրներ են առաջացել կրթության բնագավառում:

Թբիլիսիի հայկական համայնքի ազգապահպանման խնդիրը մեծապես պայմանավորված է առաջին հերթին հայկական դպրոցների անխափան գործունեությամբ: Իրապես, եթե չլինի հայկական դպրոց, ապա հայկական թատրոնը կկորցնի իր հանդիսատեսին, հայերեն հրատարակվող թերթը՝ իր ընթերցողին, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը՝ իր հավատացյալին, բուհական համակարգում գործող միակ հայկական ամբիոնը՝ իր դիմորդին: Թբիլիսիում ապրող հայերի թիվը հասնում է մոտ 100 հազարի, և քաղաքում գործում է ընդամենը 8 դպրոց<sup>1</sup>: Ներկայումս այդ 8 դպրոցներից 6-ը փակման վտանգի առջև են կանգնած: Այդ վտանգն առավել քան իրական է, քանի որ Վրաստանի կառավարությունը հանրակրթության ոլորտում անցնում է, այսպես կոչված, վառուցերային համակարգի: Այս «բարեփոխումը» ենթադրում է, որ բոլոր այն դպրոցները, որտեղ աշակերտների թիվը 700-800-ից պակաս է, մեխանիկորեն պետք է փակվեն, քանի որ պետությունն ի վիճակի չէ սուբսիդավորել դրանք: Նշված 8 դպրոցներում սովորող հայ աշակերտների թիվը միասին վերցրած կազմում է մոտ 700 աշակերտ: Այդ դպրոցներից միայն երկուսն են (95-րդը և 104-րդը) ամբողջությամբ հայկական, իսկ մնացածն ունեն հայկական սեկտոր, որը գործում է ռուսական և վրացական սեկտորներին գուզահեռ:

Հայերը հիմնականում հաճախում են ռուսական դպրոցներ: Դրանցում սովորողների մոտ 90%-ը, իսկ ուսուցիչների 75-80%-ը հայեր են: Բայց այստեղ էլ նոր միտումներ են նկատվում. վրացական դպրոցներում ազգությամբ հայ աշակերտների թիվը տարեցտարի ավելանում է և այսօր արդեն հասնում է մոտ 15 %-ի:

Ներկայումս համայնքում շրջանառվում է այն կարծիքը, թե հայկական դպրոցների փակումն արդարացված է: Ծնողները, մտահոգված իրենց երեխաների ապագայով, խուսափում են նրանց հայկական դպրոց ուղարկել, պատճառաբանելով, որ հայկական դպրոցներն ի վիճակի չեն ապահովել իրենց երեխայի՝ Վրաստանի լիիրավ քաղաքացի լինելու և ներքին կյանքին ինտերգվելու հեռանկարը: Մեր գրուցակիցների կարծիքով՝ Թբիլիսիի հայկական դպրոցները փրկելու ջանքերն արդեն ուշացած են, և գործընթացն անդառնալի հետևանքներ կունենա հայապահպանության առումով:

Ընդհանրապես հայկական դպրոցների խնդրում այսօր առկա է հիմնականում երկու մոտեցում.

*Սուղծիւնը* (որը նաև Վրաստանի կառավարության՝ ի դեմս կրթության նախարարության, տեսակետն է)՝ փակել 8 հայկական դպրոցները, փոխարենը թողնել միայն քաղաքի կենտ-

<sup>1</sup> Համեմատության համար նշենք, որ Ստամբուլում գործում է 17 հայկական վարժարան, այն դեպքում, երբ տեղի հայության թիվը կազմում է մոտ 70 հազար: Բացի այդ, բոլոր հայաշատ թաղամասերում գործում են հայկական նախակրթարաններ («Հայ Սփյուռք» Հանրագիտարան: Հ.Այվազյան, էջ 181):

րոնում գտնվող 2 դպրոց՝ 95-րդը և 104-րդը: Այս մոտեցման կողմնակիցները, որպես դրա դրական կողմ, նշում են, որ ավելի լավ է 8 վատի փոխարեն ունենալ երկու բարձրակարգ ժամանակակից դպրոց: Գտնում են, որ պետք է քայլեր ձեռնարկվի նշված 2 հայկական դպրոցներում հանրակրթության որակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման, վրացերենի դասավանդման որակի բարելավման ուղղությամբ (օրինակ՝ երկլեզու կրթության համակարգի ներդրում, որը կիրառվում է մի շարք եվրոպական երկրներում, ուր բնակվում են ազգային փոքրամասնություններ) և այլն: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ նման ձևով կարելի է կասեցնել թիֆլիսահայերի օրեցօր աճող արտագաղթը: Բայց այս ծրագրի իրականացման դեպքում վտանգ կա, որ քաղաքի մյուս հատվածներում գտնվող 6 դպրոցների հայկական սեկտորների աշակերտները կնախընտրեն տեղափոխվել իրենց բնակավայրին մոտ գտնվող ռուսական կամ վրացական դպրոցներ: Այսպիսով, հայ աշակերտների թիվը կնվազի և կսահմանափակվի միայն այդ երկու դպրոց հաճախող աշակերտներով, որոնք բնակվում են մոտակայքում:

*Երկրորդն* ավանդական մոտեցում է՝ ամեն գնով աշխատել պահել բոլոր 8 դպրոցները: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ անհիմաստ է սպասել Վրաստանի կառավարության աջակցությանը, միայն Հայաստանն է, որ կարող է միջամտել և ուղղակի ֆինանսավորել այդ դպրոցները: Անշուշտ, այս մոտեցման կողմնակիցների բանակը մեծ է, դրանց թվում են հիմնականում փակման ենթակա հայկական դպրոցների ուսուցիչները, որոնց մեծ մասը գործազրկության կմատնվի, բուհական համակարգում գործող միակ հայոց լեզվի և գրականության բաժնի աշխատակազմը, որը կզրկվի առանց այն էլ տարեցտարի քանակապես նվազող դիմորդներից և այլն:

Այս նոր ուսումնական տարում նշված 8 դպրոցները շարունակում են իրենց կրթական առաքելությունը, բայց մի քանի դպրոցներում իրականացվել է հետևյալ ծրագիրը. ձևավորվել են, այսպես կոչված, կոմպլեկտ դասարաններ: Այսինքն, երբ միավորվում են մի քանի դասարաններ (օրինակ՝ 1-ին և 2-րդ, 3-րդ և 4-րդ և այլն), կրթական գործընթացը վարում է մեկ ուսուցիչ, բայց դասարանում նստած են տարբեր տարիքի և դասարանի աշակերտներ: Այսպիսով, կրճատվում է ուսուցչական կազմը: Անկասկած, այս կերպ էլ ավելի կտուժի ուսումնառության որակը, կառաջանա նոր դժգոհություն ծնողների շրջանում, և աշակերտների թիվը կշարունակի պակասել: Փաստորեն, այս մեթոդով հայկական դպրոցների և հայեցի կրթություն ստանալու գլխավոր խնդիրը ոչ միայն լուծում չի ստանում, այլև խորանում է առկա ճգնաժամային իրավիճակը:

Իրականում, Վրաստանում տխուր հեռանկար ունեն ոչ միայն հայկական, այլ նաև ռուսական դպրոցները, այն պարզ պատճառով, որ, համաձայն կառավարական որոշման, բուհ ընդունվելու համար բոլոր դիմորդները պետք է հանձնեն նույն բարդությամբ վրացերեն լեզվի քննություններ, ինչը պահանջվում է վրացական դպրոցների շրջանավարտներից: Այդ է պատճառը, որ եթե մինչև վերջերս հայերը զանգվածաբար հաճախում էին ռուսական դպրոցներ, ապա վերջին 1-2 տարիներին նկատվում է դեպի վրացական դպրոցներ հայերի հոսքի ավելացում:

## **ԲՈՒՀ**

Թիֆլիսի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտը, որտեղ 1939թ. գործում էր հայկական ամբիոնը, տարիներ շարունակ բարձրորակ կադրերով հայկական դպրոցներին ապահովել է ուսուցիչներով ոչ միայն հայոց լեզու, հայ գրականություն, այլև հայերեն լեզվով ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա և այլ առարկաներ դասավանդելու համար: Այսօր այդ ինստիտուտն այլևս գոյություն չունի: Այն միացվել է Օտար լեզուների ինստիտուտին և վերանվանվել Իլյա Ճավճավաձեի անվան լեզուների համալսարան: Այստեղ պետք է գործեր հայկական բաժին, բայց բոլորովին վերջերս այն միավորվել է ադրբեջանական, ռուսական և այլ լեզուների բաժինների հետ: Խորհրդային տարիներին հայկական ամբիոնը միջինը տարեկան ունենում էր 10 ուսանող: Անցած ուսումնական տարում 2 դիմորդ է ունեցել, հետո դասախոսական կազմի ջանքերով հասցվել է 6-ի, բայց մեկ ուսանող վճարովի համակարգից դուրս է

մնացել վարձը չմուծելու պատճառով: Դիմորդների թվի անկումը բացատրվում է նրանով, որ այս ամբիոնի շրջանավարտն աշխատանք գտնելու լուրջ խնդիր կունենա, քանի որ հայկական դպրոցներում բոլոր առարկաները (բացի հայոց լեզվից և գրականությունից) դասավանդվելու են միայն վրացերենով:

Հայկական դպրոցների աղետալի վիճակն ուղղակիորեն բացասաբար է ազդում բուհական համակարգում վերը նշված միակ գործող հայկական բաժնում կրթական գործընթացի կազմակերպման վրա այն նույնպես դարձնելով անհեռանկարային:

Այսպիսով, Վրաստանի կառավարությունը հետևողական ջանքեր է գործադրում Թբիլիսիում հայապահպանության հիմնական գործառույթ իրականացնող՝ հայկական դպրոցների վերացման ուղղությամբ: Այս բնագավառում հիմնախնդիրներն արդեն համակարգային բնույթ են կրում: Իրավիճակն այնպիսին է, որ այսօր արդեն մեծ ջանքեր կպահանջվեն տեղի հայության կողմից այս զարգացումները կասեցնելու, նաև Վրաստանի մայրաքաղաքում նրա երբեմնի սոցիալ-տնտեսական, քաղաքական դիրքերը վերականգնելու համար:

Եթե իրատես լինենք, ապա պետք է նշենք, որ ներկայումս հայ համայնքի ներուժը բավարար չէ այս խնդրի կարգավորման համար: Տեղի հայությունը խնդիրը լուծելու միակ ուղին համարում է ՀՀ իշխանությունների և Սփյուռքի աջակցությամբ համատեղ ծրագրերի մշակումն ու դրանց իրականացումը:

*Թամարա Վարդանյան*  
*«Նորավանք» հիմնադրամ*